



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժն. Տարի - ՄԱՅԻՍ 1939 15^{me} Année - Mai 1939

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Հոգեգալստան (Վեր.) Ա. Օ. Փափազյան	52
ՀՈԳ. ԿԵՍԵՔ — Ինչ որ խաղաղութեան կ'առաջնորդէ (Թրգմ. Ն. Մ.)	67
Ս. ԴՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Թագաւորութեան իմրհուրդը Նոր Կտակարանի Ժէշ (Schofieldէն).	68
ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ — Կ'ուզեմ զկայել (Մարիամ Պօլաճեան)	70
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆՍՑ ԹՇՈՒՆԵՐԻՆ — Աստուած գոց սիրտերը ինչպէս կը բռնայ — Հոռտութիւնները կը տեղափոխէ — Ինչո՞ւ դուռը չբացուեցաւ — Փոքր ողջկան մը հտակը (Հասարեց' Վեր. Ժ. Կ. Պ.)	71
ՃԷՅՄՍ ՀԸՏՍԸՆ ԹԷՅԼԸՐ — Ձմեռը Տրէյնսայտի մէջ — Հրտարնի փորձութիւն- ները Լինտոնի մէջ (Թրգմ. Ն. Մ.)	73
ՊԱՏՄԱԿԱՆ — Մեծ դէմքեր ու գէղքեր Հայոց հաւատոյ ընտանիքէն (Բրոֆ. Դ. Դ. Խայիկեան)	75
ՊԱՏԱՆԵԱՅ — Սրտէ ի սիրտ (Սամուէլ Պ.)	79
ՉԱՆԱԶԱՆ ՀՈՒՐԵՐ — Սամուէլ եղբ. Պագաւաւեանի տեղեկագիրը (Սամուէլ Պ.)	80
ԵՐԳ — Տէրոջն հետ (Թրգմ. Յ. Ն. Ղ.)	Կողմին 3րդ էջին վրայ



ԲԱՆԲԵՐ՝ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու, պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնորոշ Յշմարտութեան
ներկայացուցիչն ալ չհանգնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրենց կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլլի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական ժամնին անդասներն են
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ս. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐԱՆՅԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:
Յօդուածաշարքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ծեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնով գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրէն հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապու համար:

ՊԱՆՈՒՄԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
Բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի Յունուարին
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 Ֆրանք, Սուրիա 20 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻԿՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօժ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
խիկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանալով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանալին վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելուն
ըէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հիանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ծեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Երբ. Ժ. 37

ԺԵ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1959

ԹԻԻ 5



ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Քանզի ճարուսին վրայ ջուր պիտի թափեմ, ու անջուր երկրին
վրայ հեղեղներ, քու սերունդիդ վրայ իմ Հոգիս պիտի թափեմ,
եւ քու որդիներուդ վրայ՝ իմ օրհնութիւնս:
Եսայ. ԽԳ. 3

ՊԵՆՏԵԿՈՍԵՆ Սինայի վրայ Աստուծոյ
ահաւոր յայտնութեան յիշատակն է, զոր հրեայ
ազգը օրէնքով հաստատուած, կը տօնէր զատ-
կուայ գառին մորթութենէն ա՛յն սարսափելի և
վճռական գիշերուայ յաջորդող Եգիպտոսի
գերութենէն ելքէն յիսուն օր վերջ, Ելից ԼԴ. 22,
Ղեւտ. ԻԳ. 15—24: Այս ա՛յն օրն էր երբ Աստուած
Սինայի վրայ ահաւոր յայտնութիւնովը Իսրա-
յէլի խօսելով, օրէնքը կուտար:

Ըստ օրինի, Զատիկուայ յաջորդող 7 շաբաթ-
ներու վերջինը պիտի ըլլար կարեւոր տօն մը:
Այս տօնին էր որ Իսրայէլ կը մատուցանէր
ցորենի հնձոց երախայրին, Բ. Օր. ԺԶ. 9—12:
Ահա նոյն տօնական օրուայ յիշատակին, երբ
Երուսաղէմ լեցուն էր ամէն կողմէ հոն հաւաք-
ուած հրեայ հաւատացելոց խումբերով, ըստ
պատուիրանի ուրախութեան տօնը կատարելու,
նոյն օրը Սուրբ Երրորդութեան երրորդ անձը
Ս. Հոգին կ'իջնէ վերնատան մէջ հաւաքուած
հաւատացելոց խումբին վրայ, յանկարծակի,
երկինքէն, սաստկաշունչ հովի մը ձայնին պէս,
և կրակով, Գործք. Բ. 1—3:

Աստուած կրկին կ'իջնէ ու կը խօսի, ոչ թէ
Սինայի ստորոտը հաւաքուած Իսրայէլին, որոնք
գարբեր առաջ օրէնքը ընդունած, սակայն կատա-
րած չըլլալով դատապարտութեան հասած էին.
ոչ թէ Եգիպտոսէ ելլող մարմնաւոր Իսրայէլին
կը յայտնուի օրէնքը տալու, այլ մեղքի աշխար-
հէն փրկուած, Իր ընտրեալներուն Իր Հոգին
տալու:

Ոչ թէ Զատիկուայ գառին արիւնով սատա-
կիչին հարուածէն աղատուած Յակոբի սերունդին
ալ Յիսուս Քրիստոսի պատուական և Սուրբ
արիւնովը փրկուած սրբոց խումբին, տալու
անոնց նոր յայտնութիւն, նոր օրէնք, նոր ուղ-
ղութիւն:

Հոն, այդ վերնատան մէջ հաւաքուած խումբը,
աղօթքով և երկիւղածութեամբ սրբուած և
պատրաստ կ'ընդունի, նոր հոգի, այսինքն
գօրութեան ու սիրոյ և զգաստութեան հոգին.
Նոր օրէնք, ոչ թէ քարերու վրայ գրուած, այլ
սրտին մարմնեղէն տախտակներուն վրայ գըր-
ուած, Բ. Կոր. Գ. 3: Աստուծոյ նոր պատուիրանքը
սիրոյ օրէնքը:

«Երբ Պէնտէկոստէի օրը հասաւ, ամէնն ալ
միաբան մէկտեղ էին»: Հնձոց երախայրին, Քրիս-
տոս, կենդանի Աստուծոյ Որդին, ահա հաւատքի
սերմը, ցորենի հատը, որուն հունձքին երախայ-
րին սեղանին վրայ է, և Տէրը կրակի այցելու-
թեամբ կ'ընդունի և կ'օրհնէ զայն:

Սուրբ երախայրի, Քրիստոս Յիսուսի հաւատ-
քովը ծլած, մեծցած, կենդանի, որոնք նոյն
հաւատքով ցրուած ամէն կողմ, պիտի աճին,
պիտի բազմանան, որոնց վրայ ահա կուգայ
Աստուծոյ սաստկաշունչ հովը, զանոնք արթըն-
ցնելու և առաջին անձրեւը, զանոնք աճեցնելով
պտղաբերելու:

Նոր տօն, երջանիկ յոյս, շնորհաց շրջան,

որուն մէջ Աստուծոյ թաղաւորութեան ամբարները պիտի լեցունին պատուական ցորենով:

Օրհնեալ օր մըն էր Պէնտէկոստէն: Ծնունդի խորհուրդը մեծ է և սքանչելի, յարութիւնը, փառաւոր յաղթանակ և օրհնեալ յոյս: Իսկ Պէնտէկոստէն, զօրութեան և ցնծութեան և լեցունութեան տօնն է:

Հոգեգալուստ, ի՛նչ օրհնեալ բառ, այո՛, Սուրբ Հոգին եկած, Յիսուս իր խոստումը կատարած է, «Հօրը պիտի աղաչեմ, և ուրիշ մխիթարիչ մը պիտի տայ ձեզի»։ Յովհ. ԺԴ. 16: «Ջանիկա ձեզի կը զրկեմ»։ Յովհ. ԺԶ. 7:

Մորթուած Գառին արիւնովը փրկուած եկեղեցին, միաբանութեան մէջ խոստումը կը վայելէ ու պիտի վայելէ, մինչեւ Տէր Յիսուս գայ և աւելի փառաւոր կեանքի մը փոխադրէ զինք: Մինչ այդ, հոս պիտի ապրի երկնային կենցաղավարութեամբ, խոստացեալ Ս. Հոգւոյն շնորհքովը կնքուած:

Հոգեգալուստ, եկեղեցիին, Յիսուսի մարմինը եղող հարսին, Ծննդեան տօնն է: Նոր շրջանի մը սկիզբը, պիտի վերջանայ յափշտակութեամբ:

Ս. Հոգին եկած է մխիթարելու, հաստատելու և առաջնորդելու եկեղեցին, մինչեւ որ նա հասնի իրեն համար պատրաստուած փառքին:

Հոգեգալուստ, օրհնեալ օր, Աստուծոյ Սուրբ Հոգին իջած է նորակազմ հոգեւոր տաճարին, Ս. եկեղեցիին մէջ ըլլալու և հոն բնակելու յաւիտեան. Ա. Կոր. Գ. 16: Յովհ. ԺԴ. 16: Երկինքի պատուհաններուն բացուիլն է հաւատացեալ հոգիին, վայելելու Աստուծոյ բոլոր օրհնութիւնները, լեցունելու, աճելու և պտղաբերելու Անով:

Մարմնաւոր Իսրայէլի շահ մը չըրաւ այն խօսքը լսելը, անոնք հրեշտակներու մատակարարութիւնովը օրէնքը ընդունեցին, սակայն չպահելով դատապարտուեցան. Գործք. Է. 51, 53: Եբր. Դ. 2:

Սինայի վրայ Աստուած կուտար «Ըրէ և մի ըներ»ի օրէնքը, վերնատան խորհուրդովը, Տէրը մեր մէջ կ'ստեղծէ կամենալը եւ ընելը իր հաճութեանը համեմատ: Փիլ. Բ. 13:

Պէնտէկոստէի հաւատացեալը իր մէջ ունի Ս. Հոգին, իր սրտին մէջ գրուած կը գտնէ Աստուծոյ օրէնքը, ուրախութիւն մը, հաճոյք մըն է իրեն համար կատարել Աստուծոյ կամքը, բնական է իրեն համար աճիլ և պտղաբերիլ, կը վայելէ Աստուծոյ զօրութիւնը, և Ս. Հոգւոյն պարգեւներովը լեցուն, Աստուծոյ մեծամեծ

գործերուն յայտնուելուն և զԱստուած փառաւորելու միջոց կ'ըլլայ: Մխիթարուած է ժամանակաւոր նեղութիւններու և չարչարանքներու ատեն: Բաղցր ու խոնարհ է հալածիչներու առջեւ, սիրով լեցուն՝ թշնամիին հանդէպ, կարեկից տկարին և ողորմած ինկածին:

Օրհնեալ կեանք, որ Պէնտէկոստէն բերաւ Աստուծոյ զաւակներուն, և Ս. Հոգին պարգեւեց Քրիստոս Յիսուսի հաւատքէն եղողներուն: Նա է մեր առաջնորդը այս անապատ աշխարհին մէջ: Մեր մխիթարիչը, այս ցաւոց ձորին մէջ: Մեր զօրութիւնը տկար մարմնոյ մէջ: Մեր յոյսը և լոյսը, խաւար շրջանին մէջ: Մեր ուսուցիչը, մեր Տէրը ըսածները յիշելու, երկնաւոր և հոգեւոր բաները հասկնալու մէջ: Մեր կրակը, երբ մենք պաղ ենք, և մեր զգաստութիւնը, երբ մենք հեղգացած ենք: Մեր ոյժը, Աւետարանը տանելու և Քրիստոսը վկայելու մէջ: Աղօթքի մէջ մեր օգնականը, և Հօրը քով մեր անբարբառ հառաչանքներով բարեխօսը, Հոմ. Ը. 26: Եկեղեցին կը վայելէ այս մեծ օրհնութիւնը և հաւատացեալ հոգիին եկեղեցիին մէջ հաղորդ է այս բոլոր բարեքներուն որ Ս. Հոգին մեզի կը պարգեւէ:

Չմարենք, ալլ արծարծենք Աստուծոյ պարգեւը. Բ. Տիմ. Ա. 6:

Չմարենք Ս. Հոգին մեր անմիաբանութեամբ:

Չմարենք զԱյն, մեր անհնազանդութեամբ, Անոր առջեւ պատուար դնելով, ալլ թողունք որ ինք իր ներգործութեամբը գրաւէ մեր բոլոր էութիւնը, մեր հոգին, շունչը և մարմինը, սըրբազործելով և Աստուծոյ հնազանդութեան գերի ընելու մեզ:

Չմարենք Ս. Հոգին Քրիստոսը վկայելու մէջ թերանալով, գոհութիւն տալու մէջ պակսելով, ամէն բանի համար և ամէն ատեն ուրախ ըլլալէ դադրելով, մարգարէութիւնները արհամարհելով, և կամ գէշ բաներու և ընկերակցութիւններու հետեւելով. Ա. Թես. Ե. 15—22:

Չտրտմեցնենք Ս. Հոգին: Նա շատ քաղցր և դիրազգած է: Ամէն դառնութիւն, բարկութիւն, աղաղակ և սրտմտութիւն ու չարութիւն կը տրտմեցնեն զԱյն. Եփես. Դ. 30, 31: Այլ մեր անձերը ընծայենք Աստուծոյ կենդանի զոհ մը, մեր մարմինները թող մնան սեղանին վրայ, ամէն կերպ պղծութենէ մաքրուած և օրէ օր սրբութիւնը կատարեալագործենք Աստուծոյ վախովը. Հռովմ. ԺԲ. 1, Բ. Կոր. Է. 1: Որպէսզի Ս. Հոգին իր մշտական ներգործութեամբը մեր

բոլոր էութիւնը զրաւելով, ընէ մեզ Սուրբ տաճար մը, փառաւորելու Տէր Յիսուս Քրիստոսը մեր մէջ և մեր միջոցով, Ամէն:

Հրոչակէ լուրն բարի, ուր որ մարդ գտնուի,
Ուր որ ցաւ վիշտ յորդէ մարդկային սիրտերէ,
Փրկեալք միաբերան, հնչեցնեն այս ձայն.

Մխիթարիչն եկաւ,

Սուրբ Հոգին երկինքէն տրուեցաւ մեր Հօրմէն.

Մխիթարիչն եկաւ:

(Վեր.) Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ



ԻՆՉ ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ

Ինչ որ սորվեցաք ու առիք եւ լսեցիք ու տեսաք իմ վրաս, ան ըրէք, եւ խաղաղութեան Աստուծոյ ձեր հետը պիտի ըլլայ:
ՓԻԼ. Դ. 9

Մեր վերջին խորհրդածութեան մէջ տեսանք թէ ինչպէս Պօղոս Առաքեալ քրիստոնէի մը խորհրդածութեան ընդարձակ տարածութիւնը բացաւ մեր առջեւ: Հոս խորհուրդէ գործի կ'անցնի: Ինչպէս որ են մեր խորհուրդները՝ նոյնպէս կ'ըլլան անշուշտ մեր գործերը: Մարդու մը մտքին մէջ տեղի ունեցած յեղափոխութիւնը անպատճառ անոր կեանքին մէջ ալ կ'երեւնայ: Բացարձակապէս անհնարին է գեղեցիկ միտք մը, սակայն զգուելի կեանք մը ունենալ: Մարդ մը ինչպէս որ իր սրտին մէջ կը խորհի, այնպէս ալ կ'ապրի: Խորհուրդէ շտկէ ու ամէն ինչ ներդաշնակ կ'ըլլայ: Ուրեմն հարկ չկար որ Առաքեալը քրիստոնէի մը մտածութեան մասին իր թելադրութիւնները տալէ վերջ գործի մասին ալ խօսէր:

Ինծի կը թուի թէ Պօղոս խորհուրդի մասին իր ըսածը մասնաւորապէս շեշտելու նպատակաւ գործի մասին ալ կը խօսի: Անոնց մտածութիւնը կը դարձնէ իր անձնական կեանքին ու սորվեցուցածին: «Ինչ որ սորվեցաք ու առիք և լսեցիք ու տեսաք իմ վրաս, ան ըրէք»: Երանի այն ուսուցիչին որ չի վախճար, որ իր աշակերտը աշակէս իր սորվածը սորվեցնողին հետ բաղդատէ: Երբեք երանի այն Աւետարանի պաշտօնեաներուն, որ Աստուծոյ խօսքին սերմը ցանելէ վերջ՝ կրնան իրենց անձնական փորձառութեանց

մէջ մատնանիշ ընել անոր զօրութիւնն ու շնորհքը: Եւ երբեք վա՛յ այն Աստուծոյ ծառաներուն, որոնց կեանքը բոլորովին կը հերքէ իրենց քարոզածը: Պօղոս Առաքեալ կը համարձակի իր ընթերցողներէն խնդրել որ իր բերնին շնորհած խօսքերը բաղդատեն իր կեանքին հետ: Յաւակնութիւն չկայ անոր այս առաջարկին մէջ: Չընդունիր թէ ինք կատարեալ է, ինչպէս որ մեր նախկին մտածութեանց մէջ տեսանք, բայց կ'ընդունի թէ Տէրը իր կեանքին մէջ հրաշքներ գործած է, որոնց նշանները ակնհեռ են ուրիշներու: Ինչո՞ւ Տէրովմով չի պարծենայ: «Գիտեմ թէ որու եմ հաւատացեր»: «Համոզուած եմ որ կրնայ պահել»: Կեանքս վկայ է խօսքերուս, քննեցէք ու տեսէք:

Նախ և առաջ Առաքեալը վստահ է թէ իր պատգամը ճշմարիտ է: Գիտենք թէ ուր կեդրոնացած էին իր սորվեցուցածները: Առաքեալին պատգամը խաչին շուրջը կը դառնար: Ան սորվեցուցած էր նաեւ թէ ոչ մէկը կարող էր խաչին քով ապրիլ առանց զոհաբերութեան զաղտնիքէն ներշնչուած ու իր անձը խաչը հանելու մղուած զգալու: Գողգոթայի շուրջին տակ ապրողներէն և ոչ մէկը պիտի ետ կենար իր արիւնը թափելէ: Յիսուսի աշակերտներուն իւրաքանչիւրին մէջ Գողգոթայէն գէթ փոքրիկ մաս մը գտնուելու է: Մեր խաչերը վերցնելու և Անոր ետեւէն երթալու ենք: Օր մը Ալպեաններու վրայէն տեղէ մը կ'անցնէի, ուր ճամբայի նշոյլն իսկ չէր երեւնար: Ապառաժներու վրայ գտնուած կարմիր նշաններու նայելով միայն կրնայի յառաջանալ: Այն կարմրաներկ ժայռերը շիտակ ճամբուն նշանները սեպելով երթալիք տեղս հասայ: Նոյնը ճշմարիտ է նաեւ Տէրովմ հետ հաղորդակցութիւն մշակող անհատի մը համար: Եթէ մեր անձերը խաչը հանած ենք, այն ուղիղ ճամբուն վրայ կը գտնուինք, որ մեզ վերջապէս կատարեալ փառքի պիտի հասցնէ: «Ան ըրէք»:

Յետոյ Առաքեալը կատարելապէս վստահ էր թէ ինչ էր իր կեանքին միտումը: «Ինչ որ... լսեցիք ու տեսաք իմ վրաս»: Երբ մէկը կ'ըսէ թէ ինք վերին բաները կը փնտռէ, երեւակայութիւն չէ: Հպարտութիւն չէ, երբ կ'ըսենք թէ դէպի Սիօն կը ճամբորդենք: Կրնայ պատահիլ որ սայթաքինք ու իյնանք, սակայն լոյսին կողմը պիտի իյնանք: Պօղոս Առաքեալ երկմտութեամբ ու դողով չի խօսիր: Փսփսալով չըսեր, «կը յուսամ թէ Փրկչին կը հետեւիմ»: Կատարեալ վստահութեան շեշտերով կը խօսի ու անոր փառաւոր վստահութիւնը վարակիչ է: Երբէք

ներելի չէ Ալպեան առաջնորդի մը, որ տեղ տեղ դադար առնէ, չի համարձակի յառաջ քալել ու անորոշ բառեր արտասանէ ճամբուն մասին: Հանդարտ ու համարձակ քայլեր առնելու է, որպէսզի իրեն հետեւողները վստահութեամբ հետեւին իր հետքերուն: Պօղոս Առաքեալ Յաւիտենական Աստուծոյն լեռնային երկիրը առաջնորդող Ալպեան առաջնորդ մըն էր: Անիկա չի վախնար հաւատքով իրմէ ծնած իր զաւակներուն դառնալ և իր ոտքերուն հետքերը մատնանիշ ընելով պատուիրել որ իրեն հետեւին: «Ինչ որ... իմ վրաս տեսաք, ան ըրէք»:

Այսպիսի խորհրդածութեան ու հնազանդութեան վարձատրութիւնն է, «խաղաղութեան Աստուածը ձեր հետը պիտի ըլլայ»: Այս խօսքը ամէն ինչ կը պարունակէ: Երբ մեր թագաւորը մեզի սեղանակից է, կտոր մը չոր հացը խնճոյքի կը փոխուի: Երբ Տէրը մեր պատերազմադաշտին վրայ է, մեզ շրջապատող աղմուկին ու խառնակութեանց մէջ, խաղաղութեան կեդրոն մը կը գտնենք: Երբ խաղաղութեան Աստուածը մեր կեանքին մէջն է, ներքին սենեակ մը կ'ունենանք, որուն մէջ որ և է պատերազմական ձայն չի թափանցեր: Երբ Տէրը մեզի հետ է, մեր կեանքին բուն ոյժը չի փնասուիր: Ի՞նչ փոյթ եթէ աշխարհ մորթս սկըթէ, կամ զիս վաղանցիկ հանգստութենէ մը զրկէ: Եթէ սիրտս առողջ է ու ամէն ինչ որ իմ մէջն է կատարեալ խաղաղութեամբ կ'ընթանայ, բոլորովին անհոգ կրնամ ըլլալ: Կարծիր ճամբան թէպէտեւ անվերջ կտուր ճամբայ մըն է, սակայն միեւնոյն ժամանակ՝ է նաև անընդհատ խաղաղութեան միակ շաւիղը:

Թարգմ. Ն. Մ.

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Վարժութիւն ըրէ քեզի յարաժամ Աստուծոյ ներկայութեան մէջ ապրիլ: Քու բոլոր խորհուրդներդ ու խօսքերդ գործնականանալէ առաջ Անոր քննութենէն անցնել սուր: Յայնժամ անթուլատրելի խորհուրդները Յիսուսի արիւնով մէկդի կը բռնին, եւ անթուլատրելի խօսքեր դեռ չխօսուած կը խեղդուին: Այն ատեն խիղճը հանգիստ եւ ուրախութիւնը անվրդով կը մնայ:



Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԹԱԳԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

«Երկինքի թագաւորութիւն» (բնագիր^(*)) կրկինքներու թագաւորութիւն) արտայայտութիւնը Մատթէոսի Աւետարանին մասնալատուկ է, և կը նշանակէ 'Իաւիթի որդւոյն Յիսուս Քրիստոսի երկրի վրայ ունենալիք Մեսիական տիրապետութիւնը: Անիկա երկնից թագաւորութիւնը կոչուած է, վասն զի երկինքի օրէնքն է որ պիտի ի գործ դրուի երկրի վրայ, Մատթ. 2: 10: Այս խօսքը ծագում առած է Դանիէլի գիրքէն, ուր անոր բացատրութիւնը այսպէս տրուած է. «Այն թագաւորներուն օրերը (առանց ձեռքի լեռնէն կտրած քար) ով աշխարհի ազգերու կառավարութեանց փշրուելէն յետոյ», «Երկինքի Աստուածը թագաւորութիւն մը պիտի հանէ», Դան. Բ 34-36, 44, է 23-27: Այս թագաւորութիւնը Դանիթի սերունդին ուխտով խոստացուած թագաւորութիւնն է, Բ. թագ. է 7-10, մարգարէներուն մէջ նկարագրուած և Դաբբիէլ հրեշտակին միջոցաւ Մարիամի որդւոյն Յիսուս Քրիստոսի վաւերացուած, Ղուկ. Ա 32, 33:

Մատթէոսի Աւետարանին մէջ երկինքի թագաւորութիւնը երեք երեւոյթներ ունի. — ա. «Մօտ է». Յովհաննէս Մկրտիչի պաշտօնէութեան սկիզբէն, Մատթ. Գ 2, մինչեւ թագաւորին բռնութեամբ մերժուիլը, և նոր եղբայրակցութեան մը յայտարարուիլը, Մատթ. ԺԲ 46-50: Բ. «Երկինքի թագաւորութեան (եօթը) խորհուրդները», որոնք պիտի կատարուին ներկայ տնտեսութեան մէջ: Մատթ. ԺԳ 1-52ի առակներուն աւելցնելու է Մատթ. ԺԳ էն յետոյ խօսուած թագաւորութեան առակները, անոնք կը վերաբերին այս տնտեսութեան ընթացքին քրիստոնէական դաւանանքի մակարդակին: Գ. Մարգարէական տեսակէտը — թագաւորութեան

(*) Հայերէնի մէջ երկինք բառը արդէն յոգնակի է, եղակին է «Երկին»:

ապագայ հաստատումը թագաւորին փառքով վերադարձէն յետոյ, Մատթ. ԻԴ 29 — ԻԵ 46, Ղուկ. ԺԺ 12-19, Գ. Առաք. ԺԵ 14-17:

Աստուծոյ թագաւորութիւնը արտայայտութիւնը, երկինքի թագաւորութիւնը արտայայտութիւնէն հինգ նկատումներով զանազանելու է. — ա. Աստուծոյ թագաւորութիւնը տիեզերական է, իր մէջ պարփակելով բոլոր բարոյական գիտակից ուժերը, որոնք կամովին Աստուծոյ կամքին կը հնազանդին, ըլլան անոնք հրեշտակներ, եկեղեցին, անցեալ կամ ապագայ տնտեսութեանց սուրբեր, Ղուկ. ԺԳ 28, 29, Եբր. ԺԲ 22, 23. մինչդեռ երկինքի թագաւորութիւնը Մեսիական է, միջնորդական, Դաւիթեան և նպատակն է Աստուծոյ թագաւորութիւնը երկրի վրայ հաստատել, Ա. Կոր. ԺԵ 24, 25, Մատթ. Գ 2: Բ. Աստուծոյ թագաւորութեան մէջ միայն նոր ծնունդով կարելի է մտնել, Յովհ. Գ 3, 5-7: Բայց երկինքի թագաւորութիւնը, ներկայ տնտեսութեան միջոցին դաւանանքի մակարդակ մըն է, որ կրնայ ճշմարիտ կամ կեղծ ըլլալ, Մատթ. ԻԵ 1, 11, 12: Գ. Քանի որ երկինքի թագաւորութիւնը, Աստուծոյ տիեզերական թագաւորութեան մեր երկրին յատկացուած բաժինն է, երկուքն ալ գրեթէ ամէն բան նոյնը ունին: Այս պատճառաւ շատ մը առակներ և ուրիշ ուսուցումներ Մատթէոսի մէջ երկինքի թագաւորութեան համար, իսկ Մարկոսի և Ղուկասու մէջ Աստուծոյ թագաւորութեան համար ըսուած են, բայց նշանակալից են մանաւանդ Մատթէոսի առակներէն ոմանցին միւս Աւետարաններուն մէջ չգտնուիլը: Յորենի և որոմներու ու նաև ուռկանի առակները, Մատթ. ԺԳ 24-30, 36-43, 47-50, չեն գործածուած Աստուծոյ թագաւորութիւնը նկարագրելու համար: Աստուծոյ թագաւորութեան մէջ ոչ որոմներ կան և ոչ գէշ ձուկեր: Բայց խմորի առակը, Մատթ. ԺԳ 33, Աստուծոյ թագաւորութեան համար ալ գործածուած է, քանզի, աւա՛ղ, նոյնիսկ թագաւորութեան ճշմարիտ վարդապետութիւններն ալ խմորուած են այն սխալներով որոնց ներկայացուցիչներն էին փարիսեցիները, Սադուկեցիները և Հերովդէսեանները: Դ. Աստուծոյ թագաւորութիւնը «Դրսուանց երեւցած բաներով չզար, Ղուկ. ԺԷ 20, բայց կը բաղկանայ գլխաւորաբար ներքին և հանգիստ բաներէ, Հով. ԺԴ 17, մինչդեռ երկինքի թագաւորութիւնը կազմակերպութիւն մը ունի և աշխարհի վրայ պիտի յայտնուի փառքով, Ղուկ. Ա 31-33: Ե. Երկինքի թագաւորութիւնը Աստուծոյ թագաւորութեան մէջ կ'ընկղմի, երբ Քրիստոս «բոլոր

թշնամիները իր ոտքերուն տակ դնելէ» յետոյ, «թագաւորութիւնը պիտի տայ Աստուծոյ ու Հօրը ձեռքը», Ա. Կոր. ԺԵ 24-28:

Թագաւորութեան ճշմարտութիւնը Նոր Կտակարանին մէջ հետեւեալ կերպով կարելի է ամփոփել:

1. Դաւիթի և անոր սերունդին տուած թագաւորութեան խոստումը, մարգարէներուն մէջ նկարագրուելէ յետոյ, Բ. Թագ. Է 8-17, 2աք. ԺԲ 8, Նոր Կտակարանի մէջ կը մտցուի առանց որ և է փոփոխութեան, Ղուկ. Ա 31-33: Թագաւորը Բեթլեհեմի մէջ ծնաւ, Մատթ. Բ 1, Միք. Ե 2, Կոյսէ մը, Մատթ. Ա 18-25, Եսայ. Է 14:

2. Թագաւորութիւնը, որ իբր «մօտ է» քարոզուեցաւ Յովհաննէս Մկրտիչէն թագաւորին և 12 առաքեալներուն կողմէ, մերժուեցաւ հրեաներէն նախ բարոյապէս, Մատթ. ԺԱ 20, և յետոյ պաշտօնապէս, Մատթ. ԻԱ 42, 43, և թագաւորը փուշերով պսակուած, խաչուեցաւ:

3. Իր պաշտօնապէս մերժուիլը և խաչուիլը նախագուշակելով՝ թագաւորը յայտնեց երկինքի թագաւորութեան խորհուրդները, որոնք պիտի կատարուէին իր մերժումէն յետոյ և փառքով վերադարձէն առաջ եղած ժամանակաշրջանին մէջ, Մատթ. ԺԳ 1-50:

4. Յետոյ նա ծանուց իր նպատակը «չինելու» իր եկեղեցին, Մատթ. ԺԶ 18, ուրիշ խորհուրդ մը, որ յայտնուեցաւ Պօղոսի ձեռքով և կը կատարուի թագաւորութեան խորհուրդներուն հետ ժամանակակցօրէն: «Երկինքի թագաւորութեան խորհուրդները» և եկեղեցիին «խորհուրդը», Եփես. Գ 9—11, պատմականօրէն նոյն ժամանակամիջոցը կը զրաւեն, այսինքն, այս ներկայ դարը:

5. Թագաւորութեան խորհուրդները պիտի վերջանան «հունձքով», Մատթ. ԺԳ 39-43, 49, 50, թագաւորին փառքով վերադառնալու ատենը: Եկեղեցին նախապէս յափշտակուած պիտի ըլլայ զԱյն օդին մէջ դիմաւորելու համար, Ա. ԹԵՍ. Դ 14-17:

6. Թագաւորը իր վերադառնալու ատեն Դաւիթեան միապետութիւնը պիտի վերահաստատէ բուն Իր Անձին մէջ, պիտի վերահաւաքէ ցրուած Իսրայէլը, պիտի հաստատէ Իր գօրութիւնը բոլոր երկրի վրայ և պիտի թագաւորէ հզար տարի, Մատթ. ԻԴ 27-30, Ղուկ. Ա 31-33, Գ. Առաք. ԺԵ 14-17, Յայտն. Ի 1-10:

7. Երկինքի թագաւորութիւնը, Դաւիթի Աստուածային Որդւոյն իշխանութեան ներքեւ հաստատուած ըլլալով՝ նպատակակէտ ունի երկրի

վրայ Աստուածային հեղինակութիւնը վերահաստատելու, քանզի երկիրը կարելի է նկատել իբր ապստամբած զաւառ մը Աստուծոյ մեծ թագաւորութեան մէջ: Երբ ասիկա կատարուի, Ա. Կոր. ԺԵ 24, 25, Որդին թագաւորութիւնը (Երկինքի - Մատթ. Գ 2) պիտի տայ «Աստուծոյ ու Հօրը», որպէսզի «Աստուած» (այսինքն՝ Երրորդութիւն Աստուած, Հայր, Որդի և Սուրբ Հոգի) «ըլլայ ամէնը ամէն բանի մէջ»: Ա. Կոր. ԺԵ 28: Յաւիտենական Աթոռը «Աստուծոյ և Գառնուկին» Աթոռն է, Յայտ. ԻԲ 4:



Կ'ՈՒԶԵՄ ՎԿԱՅԵԼ

ՈՍՏՈՐ

Ես ընկեր եղայ այն ամենուն, որոնք Բեզմէ
կը վախճան ու Բու հրամաններդ կը պահեն:
Զորացուր զիս որպէսզի ապրիմ, ու բոլոր
Բու կանոններդ ու շաղկապութիւն ընեմ:
Սաղմ. ՃԺԹ. 63 : 117

Ծնած եմ Խարբերդ՝ Զորգեղ անունով գիւղին
մէջ. ծննդեանս թուականը անորոշ է: Պզտիկ
հասակէս մայրիկս մեռաւ: Մտքիս մէջ թարմ
են անոր կեանքէն երկու դէպքեր միայն: Մէկը
այս է. — Հայրիկս պիտի ծեծէր զինքը, ինքն ալ
փախաւ շարուած անկողիններուն ետեւը պահ-
ուելուցաւ, իսկ միւսը հետեւեալը՝ երբ զիշեր
մը խոր քունիս մէջէն արթնցայ, տեսայ որ
մայրիկիս պատանքը կը կարեն: Ասկէ աւելի
երեւութական յիշատակ չունիմ անկէ:

Մայրիկս որբանոցի աղջիկ ըլլալուն, ինծի
օրհնեալ կտակ մը ձգած էր. Բ. Սր. 27: Թէն
չեմ յիշեր թէ ճամբայ քալած ատենը և կամ
պառկելու ու ելլելու ատենը ինձ կը սորվեցնէր:
Երբ կը մեծնայի, ընկերներուս հետ խաղալու
ատեն կամ որ և է ատեն, հայհոյանք մը լսելուս,
մտքիս մէջը կ'ըսէի, ես հայհոյանք չընեմ, որ-
պէսզի զժողով չերթամ: Կը հաւատամ որ Տէ-
րոջմով մանանելի հատը իմ մայրիկս իր ձեռ-
քովը իմ սրտիս մէջը դրած է, որովհետեւ տու-
ներնուս մէջը չկար մէկը որ Սուրբ Գիրք կար-
դար կամ անոր վրայով խօսէր: Միայն մէկ
անգամ կը յիշեմ որ ձմեռ ատեն երբ դրացիներ
ըլ եկած էին մեր ախոռատունը նստելու, հայ-

րիկս կը կարդար Իսրայէլի Կարմիր Ծովէն
անցնելու պատմութիւնը: Աքսորութիւնը վրայ
եկաւ, Հաճի Շակու պէկի քով ութը տարի
ծառայութեանս մէջ ամէն բան մոռցած և յու-
սահատած վիճակ մը ունէի, բայց փառք Տէրոջն
որ Տէրը ինչպէս Դանիէլը առիւծներուն բերնէն
ազատեց, այնպէս ալ անարժանս ազատեց, որմէ
յետոյ Հալէպ մեկնեցայ: Հալէպ ամուսնացայ և
վեց ամիս վերջ, 1924ին Ֆրանսա գալով Մար-
սէյլ հաստատուեցանք: Հոս, այս աշխարհիկ
քաղաքին մէջ սկսայ կամաց կամաց սինէմային
ճամբան սորվիլ ու կը շարունակէի, և երբ պա-
տահէր որ տեղերնիս փոխէինք, նախ տեղւոյն
ամենամօտ սինէման կը հարցնէի: Տէրը մեզի
երկու մանչ զաւակ պարգեւած էր, անոնցմէ
մէկը կը գրկէի, իսկ միւսին ձեռքէն բռնելով
պոնպոններով կ'երթայի, որպէսզի անոնք պոն-
պոնով զբաղին և ես ալ սինէմայով: Թէն կար-
դալ չէի գիտեր, բայց միշտակ պատկերները ինձ
կը բաւէին: Օր եղած է որ բարեկամներս եկած զիս
սինէմային մէջ փնտռած գտած են: Այսպէս
տեւեց մինչեւ 1930: Ամուսինիս գործը Գաբըլէթի
կողմն էր, իսկ տուներնիս Սէն-Լուի, ուրեմն
բնական էր գործատեղիին մօտ տեղ մը փնտռել:
Երբ Տէրը չուզեր որ հօգի մը կորսուի, անոր հա-
մար միջոցներ կը գործածէ որ Զինքը գտնէ:

Գացինք Սէնթ - Մարկրիթ, բնակարան մը
բռնեցինք, ուզեցի առաջուան սովորութեանս
պէս շարունակել: Քանի մը շաբաթ ալ անցաւ,
սիրտս կը նեղուէր, բայց կ'ամչնայի ուրիշներու
հարցնել: Սակայն փառք Տէրոջն, որ ինծի նման
կոյրին և խաւար ճամբուն մէջ պտղատողին աչ-
քերը բացաւ, Գիրք Առ. 4, 19 համարով: Այսպէս
փոխանակ Սէնթ - Մարկրիթի սինէմային ճամբան
սորվելու, Տէրը ինծի համար պատրաստած յա-
ւիտենական կեանքի ճամբան սորվեցուց: Աննա
քոյր Կարապետեանի միջոցով, որ զիս այցելեց
Կիրակի օրուան աշխատանքիս մէջ, և ըսաւ.
«Փոխանակ Կիրակի օրը աշխատելու, եկուր մեր
տունը, ամէն Կիրակի և Երեքշաբթի ժողով կ'ը-
նենք, Աստուծոյ խօսքերը կը քարոզուի»: Ես
պատճառներ փնտռելով չուզեցի երթալ, բայց
Տէրը ինձմէ զօրաւոր էր: Յաջորդ Կիրակին ելայ
և զացի: Առաջին անգամ ըլլալով Գասթարեան
եղբորմէն լսեցի Աստուծոյ խօսքերը: Այդ օրը
«Ծաղկազարդ» էր: Անկէ վերջ ժամանակ մը
շարունակեցի: Աստուծոյ զաւակները ինծի առա-
ջարկեցին որպէսզի աղօթեմ. ես միտքիս մէջը
ըսի, կուգամ և Աստուծոյ խօսքերը կը լսեմ,
բայց աղօթեմ, ատիկա չեմ ընել: Սկսայ երեքշաբ-

թի օրերը լուսացքի յատկացնել, Կիրակի օրն ալ ուրիշ զբաղման, որ ժողովի չերթամ: Տէրը զիս իմ կամքիս չթողուց, քոյրերուն յորդորանքը անպակաս էր: Երբ տեսնէի որ մեզի կուգան, կը ջանայի դուռը ետեւէն գոցել: Բայց ի գուր, արդէն դէմէն դուռին բաց ըլլալը տեսած կ'ըլլային: Նորէն սկսայ ժողովներուն երթալ: Երեք-չաբթի օր մը ժողովին նայելու կարգը Մաքրունի քողն էր: Ժողովը լմնալէն վերջ աղօթքի պատենութիւն տրուեցաւ. ամէնը աղօթելէ վերջ Մաքրունի քոյրը ըսաւ, եթէ մեր մէջ կայ մէկը որ կ'ամչնայ, նշան թող տայ և ես իրեն տեղը պիտի աղօթեմ: Ես գլուխս ծռած աչքիս տակէն կը նայէի ու տեսայ որ ուղղակի ինծի կ'ըսէ: Երկու քովս նստած քոյրերը քաջալերեցին զիս, բայց չէի կրնար ելլել. վերջապէս ելայ Տէրոջը զօրութիւնովը ինքզինքս Տէրոջը յանձնեցի, մաքսաւորին պէս, և այսպէս ուրախութիւնով լեցուած տունս գացի: Ասիկա 1932ին էր:

Ապաշխարութենէս քանի մը ամիս վերջը, նորէն վերադարձանք Սէն-Լուի, և մնացի առանձին, Աստուծոյ գաւակներէն և ժողովներէ գուրկ և կ'ըսէի «Աստուած իմ, ինչո՞ւ այսպէս եղաւ, ես Քեզ հագիւ գտած էի: Օր մը տեղւոյս Մովսէս եղբայրը իր փոքրիկ աղջիկներուն ձեռքէն բռնած տանտիրոջմէս զիս կը հարցնէր: Երբ լսեցի, վազելով ուրախութեամբ՝ ձեր փնտռածը ես եմ ըսի և շնորհակալ եղայ որ եղբայր մը ունիմ այս կողմը: Սակայն ժողովներուն կարօտին չը դիմանալով ամէն Կիրակի և Երեքշաբթի արցունք կը թափէի և կ'ըսէի, — արդեօք պիտի ըլլա՞յ այն օրը որ այս կողմն ալ Աւետարանը քարոզուի և ժողովներ ըլլան ու ես իմ Սուրբ Գիրքս առած երթամ Աստուծոյ տունը: Տէրոջս փառք կուտամ որ շատ անգամ զիս օրհնած է իմ առանձնութեանս մէջ, Տէրը զիս օրհնած է իր գաւակներուն այցելութիւնովը և իր Սուրբ Գիրքին միջոցաւ, զոր արդէն քիչ մը սկսած էի սորվիլ: Չեմ մոռնար Սաղ. 125ի և Աւետ. ըստ Յով. 14, 27ի ինձ տուած ուրախութիւնը:

Երկուք ու կէս տարի անցուցինք և Տէրը շրջեց եղբայրներ և տուաւ եկեղեցի և քարոզիչ, աղօթքս լսեց և ուխտս կատարեց, այնպէս որ կը վայելմ իր ներկայութիւնը պատիկներու հետ մէկտեղ: Փառք ու զօհութիւն կը մատուցանեմ իր Սուրբ անուանը: Այս տարի ներքին փափաք մը ունեցայ վկայութիւնս գրաւորապէս տալու, բայց չէի համարձակեր: Երբ այս տարի Մարտ 7ին իրիկունը Մարտի 11 վրայ օգնաւորով յարձակման փորձ պիտի ըլլար և ես ալ պատիկ-

ներուս հետ կը կարդայի Աւետ. ըստ Մատ. 24 գլխէն, Տէրը խօսեցաւ այս պակասը լեցնելու: Երգ 312: 3 համարը աչքիս առջեւ առնելով ու գեցի տկար վկայութիւնովս Բանբերի ընտանիքին առջեւ Տէրոջս անունը դաւանիլ: Պիտի չը դադարիմ Անոր փառք տալէն:


Ձեր աղօթքին փափաքող ձեր տկար քոյրը

ՄԱՐԻԱՄ ՊՅՅԱՃԵԱՆ

Սէն-Լուի, Մարտի 11



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ



ԿԵՆ ԱՅ

ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԱՍՏՈՒԱԾ ԳՈՅ ՍԻՐՑԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԲԱՆԱՅ



Անաստուած կին մը, ուրիշ քաղաքի մը մէջ բնակող հաւատացեալ քոյր մը ունէր: Վերջինս օր մը իր քրոջը քով եկաւ և անոր հոգիին փրկութեանը մասին խօսեցաւ, բայց անոր սրտին դուռը ճշմարտութեան դէմ ամրապէս գոց էր: Երբ հաւատացեալ քոյրը անկէ պիտի մեկնէր, ուրիշ քրիստոնեայ քոյր մը անոր խոստացաւ որ քրոջը յաճախ պիտի այցելէ: Սակայն անաստուած քոյրը ըսաւ. «Եթէ Օր. Պ. զիս տեսնելու գայ, դուռը չպիտի բանամ»: Հաւատացեալ քոյրը առաջին շաբաթներու ընթացքին չկրցաւ համարձակիլ այս անհաւատ կնոջ քով երթալ, բայց վերջապէս օր մը աղօթքով ճամբայ ելաւ իր խոստացած այցելութիւնը ընելու և մինչ ճամբան էր, զարմացաւ լսելով թէ կինը անձկանօք իրեն այցելութեանը կ'սպասէ: Ի՞նչ էր պատահած: Այս կինը, որ ցարդ իրեն տրուած ամէն խրատ մերժած էր, յանկարծ կաթուածահար եղած էր և մահուան սոսկումին տակ իր ամուսինէն խնդրած էր որ իրեն համար աղօթէ, բայց ամուսինը չէր կրնար աղօթել, ուստի նա բացազանչեց, «Երանի թէ Օր. Պ. գար»: Այսպէս այցելուն անոր սիրտը հերկուած արտի մը պէս գտաւ ու Տէրը այնպէս շնորհք մը ըրաւ որ նա թէ մարմնով և թէ հոգով բժշկութիւն գտաւ:



ՀԱՒԱՏՔԸ ԼԵՌՆԵՐԸ ԿԸ ՏԵՂԱՓՈԽԷ

Մամուրա Նեսիմա Ճափոնցի սպայի մը զաւակը՝ 1843ին աշխարհ եկաւ։ Նա իր պատանեկութեան ատեն հոլանտերէն և անգլիներէն լեզուներով գիրքեր կը կարդար։ Իր սրտին մէջ մեծ փափաք արթնցաւ քրիստոնեաներու Աստուածը և արեւմուտքի մշակոյթը ճանչնալու։ Ուստի որպէս գործաւոր նաւու մը մէջ մտնելով Ամերիկա եկաւ։ Անոր աղօթքը սա էր, «Ով Աստուած, եթէ աչքեր ունիս ինծի նայէ, եթէ ականջներ ունիս ինծի լսէ» և Աստուած անոր ձայնը լսեց։ Նա Պոսթոնի մէջ Միսիոնարական Ընկերութեան մը աշակերտը եղաւ, քիչ յետոյ անոր բարձր տաղանդը հասկցուեցաւ և Ընկերութիւնը անոր Աստուածարանութիւն ուսանիլ տուաւ։ 1874ին զինք իբրեւ Միսիոնար իր հայրենիքը ղրկեցին, որպէսզի հեթանոսութեան միջնաբերդը եղող Քիօթոյի մէջ քրիստոնէական համալսարան մը շինէ։ Նա Միսիոնար ձեռնադրուելէն օր մը առաջ բոլոր գիշերը Աստուծոյ հետ զօտեմարտելով անցուց։ Քիօթոյի մէջ պոստայական քուրմ մը անոր ըսաւ, «Քիօթոյի մէջ Յիսուսի զպրոց մը բանալ այս լեռան ելիր ու ծովը ինկիր ըսելէ տարբեր բան մը չէ»։ Բայց անոր հաւատքը յաղթանակը տարաւ։ Նա կանուխ մեռաւ, 1890ին, այն ատեն համալսարանի մէջ աշակերտներու թիւը 900ի հասած էր և հակառակ քրիստոնէական հաստատութիւն մը ըլլալուն, 1947ին կառավարութեան կողմէ որպէս համալսարան պաշտօնապէս ճանչցուեցաւ։

ԻՆՉՈ՞Ւ ԴՈՒՌԸ ԶԲԱՅՈՒԵՅԱԻ

Տօքթ. Արնօթ յաճախ կը պատմէր պատմութիւնը այն աղքատ կնոջ, որ մեծ նեղութեան մէջ ըլլալով հողատիրոջ վարձքը չէր կրնար տալ։ Տօքթորը իր գրպանը դրամ դրաւ և այս աղքատ կնոջ տունը գնաց անոր օգնելու նպատակաւ։ Երբ որբեայրիին դուռը զարկաւ, իրեն այնպէս եկաւ թէ ներսէն շշուկ մը լսեց, սակայն դուռը բանալու համար մէկը չեկաւ։ Նա աւելի ուժգին և աւելի ուժգին զարկաւ, բայց ի գուր։ Վերջապէս նա քիչ մըն ալ անհամբեր աքացի մը իջեցուց դրան, այնպէս որ հարուածին ժխորէն երբեմն դրացիներ դուրս նայեցան տեսնելու համար թէ ի՞նչ կը պատահի։ Բայց նորէն դուռը չբացուեցաւ։ Հետեւաբար ետ դարձաւ խորհելով թէ իր ականջները զինք խաբած ըլլալու էին և իրապէս ալ ներսը մարդ ըլլալու չէր։

Մէկ կամ երկու օր վերջ նա յիշեալ կնոջ հանդիպեցաւ փողոցին մէջ ու պատմեց ինչ որ պատահած էր։ Այն ատեն կինը իր ձեռքերը բարձրացնելով բացազանչեց, «Անիկա դո՞ւք էիք, ես այդ բոլոր ժամանակը տունն էի, սակայն խորհելով թէ հողատէրն է, դուռը կը պեցի»։ Շատ մը մարդիկ կը խորհին թէ Աստուծոյ շնորհքը զիրենք հարուածելու համար է որ կուգայ։ Ո՛հ, ոչ, ընդհակառակը Անիկա մեր բոլոր պարտքերը վճարելու համար կուգայ։

ՓՈՔՐ ԱՂՋԿԱՆ ՄԸ ԿՏԱԿԸ

«Հայրիկ, ամէն տարի ես քու վրայ որքա՞նի կը նստիմ», ըսաւ մեռնելու վրայ եղող աղջիկ մը իր հօրը, որ շատ աշխարհային մէկն էր և սակայն այս անգամ իր զաւկին մահուան անկողնոյն առջեւ խիստ կոտրած սրտով մը կը կայնէր։

Ի՞նչ ըսել կ'ուզես աղջիկս, պատասխանեց նա առանց խորհելու։ «Ասոր վրայ մի խորհիր զաւակս, ոչ մէկ ատեն քեզի համար շատ չէր ինչ որ ըրի, իցիւ թէ, ո՛հ, իցիւ թէ հարկւրապատիկը տայի իմ գոհարս քովս կարենալ պահելու համար»։

Բայց փոքրիկը առանց իր խորհուրդէն հրաժարելու կրկին աղաչեց, «Հայրիկ, ես ատիկա շատ զիտնալ կ'ուզեմ, ի՞նչ կ'ըլլայ, ըսէ ինծի»։ Հայրը զինքը գոհ ձգելու համար գումար մը յիշեց։

Ասոր վրայ սենեակին մէջ քիչ մը լուծիւն եղաւ, և ապա այն տկար ձայնը, որ քիչ յետոյ ընդ միշտ պիտի լռէր, խզեց լուծիւնը, «Հայրիկ, ինծի խօսք տուր որ այս գումարը ամէն տարի աղքատ, ինծի պէս երջանիկ չեղող և ինծի պէս բարի հայր մը չունեցող պզտիկներուն պիտի ծախսես»։

Հայրիկը շատ զարմացած, իր սիրելի զաւկին այս վերջին խնդրանքը կատարել խոստացաւ։ Ասոր հետեւանքը սա եղաւ որ մինչեւ հիմա աշխարհային խորհուրդի տէր եղող մարդը, որ հիմա առանց զաւկի մնացած էր, իր հարստութեանը հանդէպ ունեցած պատասխանատուութեանը վրայ արթնցաւ։ Նա տուն մը շինել տուաւ ու ետքը քանի մը ուրիշներ ալ, որոնց մէջ մինչեւ հիմա շատ մը թշուառ, խեղճ մանուկներ երջանիկ օճախ մը գտան։ Մարդը ինքն ալ իրապէս երջանիկ մարդ մը եղաւ։ Այս բոլորը մեռնելու վրայ եղող փոքրիկն Փ. Թ. Սիրոյ վերջին խորհրդածութենէն յառաջ եկաւ։

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.

ՃԵՅՄՍ

ՀԸՏԱԸՆ

ԹԻՅԼԸՐ

Ձ Մ Ե Ռ Ը
ՏՐԷՅՆՍԱՅՏԻ ՄԵՂ

«Երանի թէ 2 շիւին և 6 բէնի ունենայի, որչափ ուրախութեամբ մէկ շիւին ու 6 բէնին անոնց պիտի տայի», խորհեցաւ Հըտսըն: Ուժգնօրէն մղուած կ'զգար իր ամբողջ ունեցածի գնով այս խեղճ ընտանիքը թշուառութենէ ազատելու, սակայն իր թերահաւատութիւնը կ'արգիւէր: Միտքի այս վիճակով անշուշտ չէր կրնար շատ մխիթարել այս խեղճերը: Ջանաց ըսել որ շատ չի տրտմէին, քանզի երկինքին մէջ բարի ու սիրող Հայր մը կար որ զիրենք պիտի խնամէր, եւայլն: Սակայն այս խօսքերը արտասանած միջոցին կարծես իր խիղճը զանոնք կը խեղդէր ըսելով՝ «Դուն, կեղծաւոր, այս անդարձ մարդոց կը խօսիս բարի երկնաւոր Հօր մը վրայ ու դուն պատրաստ չես առանց քու 75 սէնթիդ Անոր վստահելու»:

Այս կերպով անկարելի էր բառ մը աւելի խօսիլ, սակայն խորհելով թէ գոնէ կրնար աղօթել՝ մարդուն դառնալով ըսաւ, «Դուն ինծմէ խնդրեցիր որ գամ կնոջ հետ աղօթեմ, ուրեմն աղօթեմք»: Այս խօսքերով ծունկի եկաւ: Հագիւ թէ «Ով Երկնաւոր Հայր» բառերը արտասանած էր, երբ իր խիղճը զինք ամբաստանելով հարցուց՝ «Կը համարձակի՞ս գԱստուած ծաղրել, կը համարձակի՞ս ծունկի գալ ու գԱյն Հայր կոչել առանց 75 սէնթիդ զրպանէդ հանելու»: Աննախընթաց պայքար մը սկսաւ Հըտսընի սրտին մէջ: 2ի գիտցաւ թէ ի՞նչպէս վերջացուց իր աղօթքը, կամ ի՞նչ աղօթեց: Ըսածներուն մէջ որ եւ է կապակցութիւն կա՞ր թէ ոչ, խեղճ մարդը դարձեալ իրեն դառնալով ըսաւ, «Կը տեսնէ՞ք թէ ինչ անեղի վիճակի մէջ կը գտնուինք, եթէ կրնաք մեզի օգնել, Պարոն, Աստուծոյ սիրոյն օգնեցէք»: Միեւնոյն երկվարկեանին Հըտսըն կայծակի արագութեամբ յիշեց «Տուր անոր որ քեզմէ կը խնդրէ» պատուէրը: Ձեռքը զրպանը տանելով հոն զգուշութեամբ պահուած 75 սէնթը առնելով զայն մեքենաբար աղքատ մարդուն ձեռքին մէջ դրաւ ըսելով, «Իմ երեւոյթէս դատելով կարելի է կը խորհիք թէ բաղդատաբար բարեկեցիկ վիճակ մը ունիմ, սակայն այս դրամը քեզի տալով՝ ամբողջ ունեցածս քեզի տուած

կ'ըլլամ»: Միեւնոյն վայրկեանին զարմացաւ թէ ինչպէս իր շրթունքները կ'ըսէին՝ «Աստուած ճշմարտապէս հայր մըն է, որուն կրնանք վստահիլ»: Այս կերպով խեղճ կնոջ կեանքը ազատեցաւ և Հըտսըն թէյլըր կ'ըսէ թէ իր հոգեւոր կեանքն ալ ազատած էր անհնազանդութեան ու անհաւատութեան ժայռին վրայ ջախջախուելէ:

Այդ գիշեր տուն վերադարձաւ թեթեւ սրտով ու թեթեւ զրպանով: Նոյնիսկ այն մութ ու ամայի ճամբաները, որոնցմէ անցնելու ստիպուած էր, կարծես կ'արձագանդէին իր սրտին փառաբանութեան երգը՝ զոր չէր կրնար զսպել: Հանգիստ քուն մը քնանալէ վերջ՝ երկուշաբթի առաւօտուն կանուխ անակնկալ նամակ մը ստացաւ: Պահարանին վրայի գիւրը անծանօթ էր իրեն: Մէջէն ելած թուղթի կտորին վրայ ալ որ եւ է գրութիւն չկար: Զարմանքով տեսաւ թէ պահարանը գոյգ մը նոր կաշիէ ձեռնոց կը պարուանակէր, որոնց մէջէն գետին գլորեցաւ կէս Անգլիական ոսկի: Հըտսըն կ'ըսէ՝ «Անմիջապէս աղաղակեցի, փառք Տէրոջը, իրեն տուած դրամս 12 ժամուան մէջ հարիւրին 400 տոկոս բերաւ, Հըլլի վաճառականները որչափ ուրախ պիտի ըլլային եթէ կարելի ըլլար իրենց դրամը այսքան շահով փոխ տալ»:

Տօքթ. Հարտի միտքը ինկած չէր Հըտսընի վճարումը և անոր յիշեցնել շատ դիւրին խնդիր մըն էր, սակայն ի՞նչ պիտի ըլլար իր սորվելիք դասը, որմէ կ'զգար թէ կախում ունէր իր ապագայ օգտակարութիւնը: Ի՞նչպէս պիտի սորվէր միմիայն աղօթքի ու Աստուծոյ միջոցով մարդիկ շարժման բերել:

Երկու շաբաթ չանցած Հըտսըն դարձեալ ինքզինքը բոլորովին առանց դրամի գտաւ: Շաբաթ գիշերը իր սենեակին վարձքը վճարուելու էր տան տիրուհիին որ քրիստոնեայ, սակայն աղքատ կին մըն էր ու անկարող սպասելու: Արդեօք խեղճ կնոջ սիրոյն խօսելով էր Տօքթ. Հարտի: Եթէ այնպէս ընէր, ստիպուած պիտի ըլլար ընդունելու թէ ինք 2ինաստանի մէջ միսինարական գործի ձեռնարկելու յարմարութիւնը չունէր: Գրեթէ ամբողջ հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրը, որչափ ժամանակ որ վերաբուժանոցին մէջ զբաղած չէր, աղօթքով անցուց: Շաբաթ կէսօրէն վերջ՝ ժամը հինգին Տօքթոր Հարտի իր վերջին հիւանդին նայելէ ու պատրաստուելիք դեղագիրները լմնցնելէ վերջ՝ թիկնաթոռին մէջ տեղաւորուելով սկսաւ հոգեւոր

նիւթերու վրայ խօսիլ: Ճիշդ այդ ժամանակին չըտսըն քովի սենեակին մէջ այնպիսի գործով մը զբաղած էր որ իր ամբողջ ուշադրութիւնը կը պահանջէր: Մէկէն ի մէկ բժիշկը բացա դանչեց՝ «Ի՞նչ կ'ըսես, թէյլըր, քեզի վճարելու ժամանակս եկած չէ՞ դեռ»: «Բաւականատէն է, անցած է ժամանակը», պատասխանեց չըտսըն հանդարտութեամբ:

«Կը ցաւիմ որ ինծի չի յիշեցուցիր, գիտես թէ որչափ զբաղած եմ: Երանի թէ քիչ մը աւելի կանուխ յիշէի, քանզի այս կէսօրէն վերջ ամբողջ ունեցած զրամս պանքան զրկեցի, եթէ ոչ անմիջապէս կը վճարէի», ըսաւ Տօքթ. Հարտի:

Բարեբախտաբար ճիշդ այդ վայրկեանին չըտսընի գործը կը պահանջէր որ մէյ մը դուրս ելլէր, այնպէս որ Տօքթ. Հարտի չկրցաւ տեսնել անոր յուսախաբուութիւնը:

Բժիշկին մեկնելէն վերջը չըտսըն իր գործը լրացուց ու աղօթելու համար լոկի տեղ մը գտնելով սկսաւ աղօթել: Քիչ վերջը սիրտը խաղաղեցաւ:

Ըստ իր սովորութեան շաբաթ իրիկունը վիրաբուժանոցին մէջ անցուց՝ իր յաջորդ օրուան աղքատներուն տրուելիք քարոզին համար նախապատրաստուելով: Ժամը 10ին ոտքի ելաւ ու վերադարձն հագաւ որ տուն երթայ: Դիտէր թէ տան տիկինը արդէն պառկած պիտի ըլլար: Կը յուսար թէ երկուշաբթի բան մը կը պատահէր, որպէսզի կարենար իր վարձքը վճարել: Ձեռքը երկնցուց որ լոյսը մարելով դուրս ելլէ, երբ իրեն ծանօթ ոտքի ձայն մը ու խնդուք մը լսեց: Հասկեցաւ թէ զուարճալի բան մը պատահած էր Տօքթ. Հարտիին: Բժիշկը ներս մտնելով ըսաւ՝ «Այնպիսի զուարճալի բան մը պատահեցաւ որ, ամենահարուստ յաճախորդներէս մէկը գիշերուան այս ժամուն եկաւ իր պարտքը վճարելու: Մէյ մը հաշիւը նայէ, տէ՛ս որչափ է տալիքը: Զարմանալի չէ՞ որ գիշերուան այս պահուն կուգայ, մինչ կարող էր որ եւէ օր իր չէքը գրելու:» Յետոյ մէկէն ի մէկ չըտսընի դառնալով ըսաւ՝ «Աղէկ յիշեցի, այս դրամը դուն առ հիմա ու մնացած տալիքս յառաջիկայ շաբթուն կը վճարեմ:»

Աղէկ եղաւ որ Տօքթ. Հարտի անմիջապէս մեկնեցաւ ու չըտսըն դարձեալ մինակ մնաց, քանզի անիկա անկարող էր իր ուրախութիւնն ու երախտագիտութիւնը գսպել ճիշդ այդ վայրկեանին: Ոչ թէ դրամը իր ձեռքին մէջ ունենալուն համար միայն՝ այլ մանաւանդ անոր համար

որ դարձեալ պարզապէս տեսած էր թէ Աստուած աղօթքի միջոցով մարդիկ շարժման կը բերէ: «Թերեւս վերջապէս Զինաստան պիտի կրնամ երթալ» խորհեցաւ ան:

ՀԵՏՈՐՆԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Չըտսընի միտքը օրէ օր զբաղած էր հետեւեալ հարցումներուն նման հարցումներով՝ «Եթէ քեզի դուռ մը բանամ ու հրամայեմ որ մտնես, կ'ուզե՞ս հետեւիլ ինծի առանց ճամբան յստակօրէն տեսնելու: Կ'ուզե՞ս ինծի վստահիլ: Դիտող մազերն իսկ համրուած են: Շատ մը ճնշողականութիւն աւելի արժէք ունիս դուն: 1852ի սկիզբները, երբ տակաւին Տօքթ. Հարտիի քով կ'աշխատէր, օր մը իր սենեակին մէջ նստած իր քրոջը Ամէլիայի այսպէս կը գրէր՝ «Ինծի կուգայ թէ Տէրը կուզէ որ ներկայ պաշտօնէս հրաժարիմ ու Զինաստան դացող նաւու մը վրայ գործ մը գտնելով՝ հոն երթամ: Երթամ հաւատքով ու առանց տարակոյսի: Համբերութեամբ կ'սպասեմ իր առաջնորդութեան: Իր ժամանակին պիտի յայտնէ ինծի իր կամքը զոր կատարելու համար ինք ու միմիայն ինք կրնայ ինծի շնորհ տալ»:

Չըտսըն կը խորհէր Զինաստան դացող նաւու մը վիրաբուժին իբրեւ օգնական իր ճամբուն ծախքը հանել, սակայն իր այս ծրագիրը չի յաջողելով, մտածեց իբրեւ նաւաստի ճամբորդել: Նաւապետը Ֆինչ զգուշացուց զինք այդպիսի քայլ մը առնելու, ըսելով թէ այդ կերպով շատ նեղութիւն պիտի կրէր ու պիտի չկրնար չար ընկերակցութիւններէ բոլորովին զերծ պահուիլ: Սակայն ոչինչ կարող էր չըտսընի հաւատքին ու կորովին դէմ կենալ: Կ'զգար թէ Յիսուսի արժանիքը չարչարանք կրելու աստիճան զոհաբերութենէ ա'լ աւելի վեր էր:

Զինական Աւետարանչական Ընկերութիւնը, ինչպէս նաեւ իր հայրը իրեն դրամապէս օգնել ուզեցին, սակայն ամենէն անկեղծ շնորհակալութեամբ մերժեց անոնց օգնութիւնը: Դժուարութիւններու մէջ Աստուծոյ խոստացած խնամքը լիովին փորձելու համար՝ յօժարակամ հեռի կը կենար ամէն կարելի նպաստի աղբիւրէ:

Զգաց թէ շիտակ էր Տօքթ. Հարտիի անմիջապէս իմացնել իր նպատակը, որպէսզի Լոնտոն երթալով իր բժշկական դասընթացքը շարունակէր: Քանի որ իր առնելիք քայլը որոշած էր, ամէն բանի կոնակ դարձնելով Լոնտոնի նման մեծ քաղաք մը գնաց առանց զիտնալու թէ արդեօք հոն պիտի կարենա՞ր գործ գտնել: Յարմար գործ մը գտնելու իր բոլոր ջանքերը

ի դերեւ ելան: Անցեալին մէջ իր անձին համար դրամ աւելցուցած չէր, որ կարենար նեղը մնալուն պէս գործածել: Զինաստանի համար իրեն պէտք եղածը գնելու քանի մը ոսկի միայն ունէր իր քով: Սակայն ապագայի համար հոգ ընելու ժամանակ չի վատնեց: Հրաւիրուած էր քանի մը օր իր հօրեղբօր հիւր ըլլալու մինչեւ որ գործ մը գտնէր: Հիւանդանոցի ծախքերը պիտի հոգացուէին, սակայն ձեռքի վրայ ծախսելու դրամ գրեթէ չունէր իր գրպանին մէջ:

Սեպտեմբերի մէջ տեղերը իր քրոջը Ամէլիայի դրամ մէկ նամակին մէջ կ'ըսէ՝ «Անցեալ աշուն ջուրը ինկող, սակայն լողալ չգիտցող մարդու մը պէս, կամ ջուրէն դուրս գտնուող ձուկի մը նման կը տագնապէի ու կը նեղուէի թէ այս կամ այն խնդիրը ինչպէս պիտի կարգադրէի, սակայն արդիւնք մը չտեսայ. բայց երբ Տէրը դուռը բացաւ, հակառակ անոր որ ամէն ինչ աննշապատ կ'երեւէր, Անիկա դժուարութիւն դժուարութեան հետեւ վերցնել սկսաւ ինծի յայտնապէս ըսելով՝ «Լուռ կեցի՛ր ու գիտցի՛ր թէ ես Աստուած եմ»:

Դժուարութիւններէն մին ամենէն քիչ աւելնկալուած աղբիւրէ մը ծագեցաւ: Քանի որ երկու տարիէ ի վեր Մր. Փիրսի հետ թղթակցած էր, խորհեցաւ թէ ան իրեն համար ամէն կարգադրութիւն ըրած էր անմիջապէս հիւանդանոց մտնելով բժշկութիւն ուսանելու: Սակայն Մր. Փիրս Ընկերութեան գործերէն դուրս այնքան անձնական գործեր ունէր որ չըտարն տեսաւ թէ ինք իր ձեռքով իր գործը տեսնելու էր: Ասիկա առաջին փորձառութիւնն էր որ կատարելապէս կազմակերպուած ընկերութեան մը չափազանց պաշտօնական կերպերուն հետ ունեցաւ: Ասկէ առաւ դասը երբէք չմոռցաւ, երբ գործ ունեցաւ միսինարութեան պատրաստուող անհատներու հետ: Երկար շաբաթներ սպասելէ ու պայքարելէ ետք վերջապէս յաջողեցաւ հիւանդանոց մը մտնել իբրեւ ուսանող:

Հիւանդանոցը այնչափ հեռու էր իր բնակավայրէն որ օրական ամենէն քիչ երկու ժամ կ'առնէր հոն երթալու և դառնալու: Այն օրերուն միակ երթեւեկութեան միջոցը հանրակառքն էր, որը գործածելու համար պէտք եղածին չափ դրամ չունէր: Ուրեմն ստիպուած էր քալել:

(Շարունակելի)

Թարգմ. Ն. Մ.



ՊԱՏՄԱԿԱՆ
ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՅ ՀԱՒԱՏՈՅ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ՄԵՇՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ (353-373)

ՆԵՐՍԷՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.
Ներսէսի նման մեծ հայրենասէր մը բնականօրէն չէր կրնար անտարբեր մնալ հանդէպ քաղաքական տխուր դէպքերու ու կրօնական հալածանքներուն (տե՛ս Բանբեր Մարտ 1939), որոնցմով կը փութորկէր Հայաստան իր կաթողիկոսութեան շրջանին: Իր ժամանակի բոլոր հայերէն աւելի սրատես՝ անիկա խորապէս թափանցած էր արքայից արքային, Շապուհ Բ.ի ծրագրին, որ էր Հայաստանի մէջէն ջնջել քրիստոնէական կրօնն ու Արշակունեաց հարստութիւնը և ամբողջովին իւրացնել մեր հայրենիքը:

Խորամանկ թշնամույն այդ դիտաւորութիւնը ի դերեւ հանելու համար Ներսէս կը նախատեսէր երկու միջոց, — սերտ գործակցութիւն հայ թագաւորին ու նախարարներու միջեւ և յարում բիւզանդական օրիանթասիոնի:

Առաջինը յաջողցնելու համար՝ կը յորդորէր Արշակ Բ.ը՝ զգաստ կենցաղավարութեամբ, շինարարութեամբ և իմաստուն քաղաքականութեամբ բարձրացնել թագաւորին, — երկրին կեդրոնական իշխանութեան հեղինակութիւնը և սիրաշահիլ նախարարները: Ասոնց ալ խորհուրդ կուտար՝ մէկդի դնել իրենց տոհմային հաշիւները, բոլորուել թագաւորին շուրջ, — հակառակ անոր թերութիւններուն, — և միասնաբար պաշտպանել հայրենիքը հասարակաց վտանգաւոր թշնամույն դէմ:

Դալով երկրորդին՝ Ներսէս համոզուած էր թէ Հայաստան մասնաւոր դաշնակցային կապերով յարելու էր Բիւզանդիոնի: Նա կը ճանչնար անոր այն տարիներու մէջ ունեցած տկարութիւնը և շահադէտ քաղաքականութիւնը: Բայց կը խորհէր նաեւ թէ Հայաստան առանձին մնալու չէր, քանզի ի վիճակի չէր միայն իր ուժերով պաշտպանելու ինքզինքը հզօր թշնամույն դէմ: Ուստի փոքրագոյն չարիքն էր կռթնիլ Բիւզանդիոնի՝ խափանելու համար Շապուհի թշնամական ձգտումները:

Ատեն մը Արշակ Բ. և նախարարներու մեծամասնութիւնը համամիտ էին Ներսէսի տեսու-

թեանց և մեր երկրի այս երեք կարեւոր ուժերը ձեռք ձեռքի տուած՝ բարեկարգեցին եկեղեցին և լեցուցին Հայաստանը կրթական ու բարեգործական հաստատութիւններով:

Բայց այդ համերաշխ գործակցութիւնը երկարատեւ չեղաւ: 6 տարի վերջը Արշակ Բ. և նախարարներ սկսան մէկ ոճիւրէ ու ձախող քաղաքականութենէ միւսին մէջ գլորել, քայքայեցին երկրի միաբանութեան, ապահովութեան և արքայական հեղինակութեան հիմերը և հայրենիքը հասցուցին կործանման անդունդին եզերքը:

Այս խօսքն ապացուցանելու համար՝ յիշենք մի քանի դէպքեր, ուր միեւնոյն ատեն ի յայտ կուգայ Ներսէսի եռանդուն ու օգտակար գործունէութիւնը այդ մութ օրերուն մէջ:

Արշակ Բ. դաւադրութեամբ սպաննել տուաւ իր եղբորորդին, — Ֆրգիքական, մտաւոր ու բարոյական ընտիր ձիրքերով օժտուած Գնէլ պատանին, — անսալով քսուներու, որոնք զինքը համոզած էին թէ անիկա իր գահը յափշտակել կ'ուզէ: Իմացաւ Ներսէս, կիսատ ձգեց եկեղեցական արարողութիւնը և զնաց ոճիրէն առաջ աղաչեց անոր՝ խնայել Գնէլի: Իսկ ոճիրէն ետքը Եղիայի անվախութեամբ յանդիմանեց թագաւորը և հռչակեց «թէ նա ինքն է Տիրանի ու Գնէլի սպանիչը, թէ անէծքին ներքեւ ինկած է և թէ Աստուած չարաչար կերպով իրմէ ու իր մեղսակիցներէն պիտի լուծէ այդ անիրաւութեանց վրէժը» (Օրմանեան): Եւ իբր բողոք հեռացաւ թագաւորէն երկար ատենուան համար:

Սակայն Արշակ փոխանակ զգաստանալու այս յանդիմանութենէն, գործեց ուրիշ ոճիրներ ալ: Սպանեց իր կինը, — Ողիմպիադա թագուհին, — զայն Մըշիւնիկ անունով չքահանայի մը ձեռքով թունաւորելով հաղորդութեան ատեն:

Այսպիսի արարքներով նա տկարացուց իր թագաւորական հեղինակութիւնը: Ջայն դարձեալ զօրացնելու և նախարարներու ուժը տկարացնելու դիտումով՝ Արշակ շինել տուաւ Արշակաւանը և արքայական հրովարտակով յայտարարեց թէ հոն ապաստանող յանցապարտները դատաստանէ ու պատիժէ ազատ պիտի ըլլային: Քաղաքը ատով շուտով բազմամարդ դարձաւ, բայց եղաւ նաեւ վայր մը գողերու, աւազակներու և ուրիշ ոճրագործներու: Ասով խանգարուեցաւ նաեւ երկրին ապահովութիւնը և վտանգուեցաւ նախարարներու ստացուածքն ու կեանքը:

Ասոնք կուրացած վրէժխնդրական զգացումէ՝ ապստամբեցան թագաւորին դէմ, դիմեցին

Շապուհի օգնութեանը և սկսան նախապատրաստուիլ՝ քալելու Արշակաւանի վրայ:

Մեծն Ներսէս՝ ազգամիջեան կռիւները արգիլելու համար միջամտեց, Արշակի խորհուրդ տուաւ որպէսզի նա վերցնէ աղէտաբեր հրովարտակը, ցրուէ քաղքին ոճրագործները և հրաման ընէ՝ վերադարձնելու գողօնները ու վճարելու պարտքերը: Միեւնոյն ատեն խոստացաւ թագաւորին՝ օգնել իրեն, որպէսզի Արշակաւանը շէնցուի արդարութեամբ: Արշակ փոխանակ անսալու, «կը ծաղրէր կաթողիկոսին խօսքը»:

Նախարարներն ալ արժէք չտուին Ներսէսի խօսքին, քալեցին Արշակաւանի վրայ և «զայն սրով զարկին»: Պակասը լրացուց ժանտախտը, քաղաքը դարձաւ աւերակ ու ամայի: Մեծն Ներսէս հազիւ կրցաւ ազատիլ ու իր խնամոց տակ առնել մանուկները:

Առանց մտիկ ընելու Ներսէսի, — որ իրենց կ'ըսէր, «Եթէ բիւր անգամ չար է Արշակ, սակայն աստուածապաշտ է և թէպէտ մեղաւոր՝ ձեր թագաւորն է», — նախարարները պահեցին նաեւ իրենց զինակցութիւնը Շապուհի հետ և սկսան տնաքանդ կռիւները ընդդէմ Արշակի:

Թագաւորին ու նախարարներուն այս ամէն ոճիրներու ու քաղաքական կարճատեսութեան հետեւանքն եղաւ Շապուհի յարձակումը Հայաստանի վրայ, Արշակի բանտարկութիւնն ու անձնասպանութիւնը, Փառանձեմ թագուհոյն անարգալից մահը, շատ մը նախարարներու, անոնց կիներուն և բազմաթիւ ժողովուրդի աքսորն ու սպանումը, հազարաւոր քրիստոնեաներու մարտիրոսացումը և Հայաստանի կարեւոր մէկ մասին աւերումը (տե՛ս Բանբեր Մարտ 1939):

Սակայն Ներսէս բոլոր մեծ մարդոց նման դժուարութեանց տակ յուսահատող չէր: Նա Արշակաւանի կործանումէն յետոյ ալ շարունակեց իր միջնորդութիւնը: Եւ Արշակի բանտարկուելէն ու պարսկական բանակին յարձակումէն յետոյ հայ նախարարներուն և ժողովուրդին վերապրողները վերջապէս հասկցան զինքը՝ ճանչցան հայուն ամէնէն նենգ թշնամին յանձին Շապուհ Բ.ի և անկէ Հայաստանի սպառնացող կործանարար վտանգը: Ուստի նախարարներէն ոմանք իրենց ընտանիքներով յունական սահմանն անցան, և ուրիշներ քաշուեցան իրենց ամրոցները և պատրաստուեցան դիմադրութեան:

Միւս կողմէն անոնք նոր սպարապետ Մուշեղ Մամիկոնեանի, — քաջ բայց տարաբաղդ վասակի որդւոյն, — զլխաւորութեամբ պատ-

գամառութիւն մը զրկեցին Բիւզանդական կայսեր վաղեմի: Անոնց միացաւ նաեւ Մեծն Ներսէս, որ առաջ երկու անգամ Բիւզանդիոն գացած էր իբր պատգամաւոր: Անոնք կայսեր ներկայացուցին Հայաստանի կացութիւնն ու քրիստոնէութեան սպառնացող վտանգը: Վաղէս նկատելով որ Հայաստանի վրայ Պարսից տիրապետութիւնը իր կայսրութեան շահերուն ալ փնտրակար է, թագաւոր կարգեց Արշակի որդին Պապը և հրամայեց Տէրէնդիոս սպարապետին որպէսզի հայոց օգնութեան հասնի: Տէրէնդիոս իրեն հետ ունենալով Ներսէս հայրապետը, Մուշեղ Մամիկոնեան, Պապ թագաւոր և բաւական զօրաւոր յոյն բանակ մը, Հայաստան մտաւ: Սահմանին վրայ իրեն միացան նաեւ հայ փախստական նախարարները իրենց զօրքով:

Իրենց ղէմ կը գտնուէր պարսկական մեծ բանակ մը, որուն կը հրամայէին դաւաճան Մերուժանն ու Վահանը: Ուստի քրիստոնէից բանակը չկրցաւ արագ յառաջանալ և թշնամին դեռ ժամանակ ունեցաւ՝ աւարելլու և աւերելլու շատ մը քաղաքներ և գործելու այն խժոժութիւնները, որոնց վրայով խօսեցանք Բանքերի Մարտի թուոյն մէջ:

Սակայն յոյն ու հայ բանակը զօրացաւ նոր գունդերով՝ Ադդէ կոմսի ղեկավարութեամբ, և սկսաւ յառաջանալ թշնամուոյն ղէմ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցաւ Բագրեւանդ դաւառի Ձերաւ դաշտին վրայ: Երկու կողմն ալ կը կռուէին մեծ քաջութեամբ: Մանաւանդ Մուշեղ Մամիկոնեանի հրամանատարութեան տակ գտնուող հայ բանակը: Հոն էր նաեւ հայրենասէր հայրապետ, Մեծն Ներսէս: Նա գիտէր թէ պատերազմի ելքը Աստուծոյ կախում ունի, յաղթութիւնը միայն Անոր շնորհքն է: Ուստի նա Պապի հետ նպատ լերան վրայ բարձրացած, Մովսէսի նման բազկատարած, անդադար կ'աղօթէր իր Տէրոջ՝ քրիստոնէից յաղթանակին համար: Եւ Տէրը տուաւ այդ յաղթանակը: Պարսիկները չարաչար պարտուեցան ու փախան: Երկու հայ մեծ դաւաճաններէն Մերուժան Արծրունին սպանուեցաւ Սմբատ Բագրատունիի ձեռքով: Իսկ անոր պորձակից Վահան Մամիկոնեանը արդէն ամիսներ առաջ սպանուած էր իր հարազատ որդւոյն Սամուէլէն, որուն հայրենասէր հոգին չէր կրցած տոկալ հօրը դաւաճանութեանը:

Ձերաւի յաղթութենէն ետքը քրիստոնէից բանակը «նոր յաղթութիւն մըն ալ տարաւ Գանձակ քաղաքին մօտ և այսպէս՝ պահ մը

ազատեցաւ Հայաստան Պարսիկներու արշաւանքներէն» և Պապ հաստատուեցաւ իր հայրերու, Արշակունեաց գահուն վրայ:

Այս յաջողութիւններէն յետոյ հայոց նոր սպարապետը, Մուշեղ Մամիկոնեան, յարձակեցաւ այն բերդերուն և քաղաքներուն վրայ, որոնք դեռ Պարսից և ուրացեալ հայերուն ձեռքը կը գտնուէին: Յրուեց թշնամիները, կործանեց պարսկական կրօնի պաշտաման համար կառուցուած ատրուշանները և վերահաստատեց քրիստոնէական արարողութիւնները: Այսպէս՝ Տէրը այս զօրապետն ալ գործածեց այն օրերուն՝ հայ եկեղեցին ու Հայաստանը կործանումէ ազատելու համար: Իրաւ է, ան ունեցաւ իր մեծ ու պախաւակելի մեղքերն ալ, — օրինակ. նա մորթագերծ ընելով սպանել տուաւ շատ մը Պարսիկ երեւելիներ, լուծելու համար վրէժը իր հօրը Վասէկին և ուրիշ հայերու, որոնք նման մահուամբ սպանուած էին: Այսուհանդերձ Մուշեղ քաջ, հայրենասէր ու ռազմագէտ զօրավար մըն էր, ինչպէս նաեւ աստուածավախ, որուն շնորհիւ նա իր մէջ կը կրէր մեծ անձն ու ասպետական սիրտ մը, յիշենք մէկ դէպք միայն. — թէեւ նա տեղեակ էր թէ Շապուհը ինչ ստորին ու զազանային վարմունք ունեցած էր հանդէպ հայ թագունիին, Փառանձեմի և շատ մը նախարարներու կիներուն, Մուշեղ ողջ, անարատ ու ապահով Շապուհի վերադարձուց անոր կիները, որոնք իր ձեռքը գերի ինկած էին: Հայ սպարապետին այս ազնուական վերաբերմունքը սքանչացման առարկան եղաւ նոյնիսկ Շապուհի:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՆ ՈՒ ՄԱՀԸ. — Երկիրը խաղաղելէն յետոյ՝ Ներսէս դարձեալ աւելի մեծ թափով նուիրուեցաւ իր հովուական պաշտօնին: Վերանորոգեց պատերազմի ատեն աւերուած եկեղեցիները, վանքերը, դպրոցները և հիւանդանոցներն ու անկելանոցները և ջանաց օժտել եկեղեցիները լաւ կանոններով ու հովիւներով:

Համոզուած ըլլալով թէ վերաշինութեան ու յառաջդիմութեան համար անհրաժեշտ է երկրին երկու զլխաւոր ուժերու միաբանութիւնը՝ Ներսէս ետեւէ եղաւ նաեւ որ Պապ թագաւորը «նախարարներուն հետ հայրական խնամով վարուի» և անոնք ալ անոր «ծառայեն միամտութեամբ և անգամ մըն ալ զլուխ չքաշեն»: Պապ իր թագաւորութեան սկիզբը քալեց Հայրապետին ցուցմունքներուն համաձայն և նախարարներուն վերադարձուց անոնց կալուածները, որոնք իր հօր Արշակի կողմէն բռնազրաւուած էին:

Սակայն դժբաղդաբար ներսէսի կեանքի այս վերջին շրջանը հազիւ երեք տարի տեւեց: 373ին նա ի Տէր ննջեց՝ թագաւորէն տրուած ճաշկերոյթի մը ատեն յանկարծ սրտի տագնապի ենթարկուելով: Ինչպէս կը ներկայացնեն մեր պատմաբանները, նա թունաւորուած չէ Պապէն, Ասիկա թէեւ շուտով մոռցաւ Պարսիկներէն եկած չարիքը և սկսաւ յարիւ աւելի Տիդոտոնի քան թէ Բիւզանդիոնի, ինչպէս նաեւ չվարեց բարոյական մաքուր կեանք մը, թէեւ այդ երկու պատճառաւ ցրտութիւն ինկաւ իր և Ներսէսի միջեւ, բայց մահուան պարագաները կը ցուցնեն թէ աւելի հաւանական է որ Ներսէս մեռած է սրտի տկարութենէ: Եւ այս անբնական ալ չէր: Ներսէս իր հայրապետութեան քսանամեայ շրջանին ունեցած էր շատ եռանդուն և ուժասպառ գործունէութիւն: Անկէ զատ՝ շատ տառապած է հայրենիքին դժբաղդութենէն: Ուստի անոր զգայուն սիրտը պարտասած էր ու չկրցաւ երկար տոկալ:

Երբ հազիւ 45 տարեկան էր, վախճանեցաւ նա Եկեղեցաց (էրզրնկեան) խախ գիւղին մէջ, ուրկէ իր մարմինը փոխադրուեցաւ թիւ աւանը ու հոն թաղուեցաւ իր վաղամեռիկ կնոջ, Սանդուխտի քով: Յուզարկաւորութեան թափօրին կ'ընկերանային Պապ թագաւորը, եկեղեցականաց դասը, բազմաթիւ նախարարներ, Մուշեղ սպարապետը հայկական բանակով, և ժողովուրդը: Թաղուեցաւ արքունական շքեղութեամբ «և իր մահը» սգաց ամբողջ հայ ազգը, բարձրագոյնէն խոնարհագոյն խաւը անխտիր:

ՄԵՐՆ ՆԵՐՍԷՍԻ ԴԵՐԸ. — Նա արժանի էր վերոյիշեալ յարգանքին, ինչպէս նաեւ իրեն տրուած մեծ մակդիրին, քանզի մեծ եղած է իր դերը մեր ազգային ու կրօնական կեանքին մէջ: Մասնաւորաբար ինքն էր որ ցուցուց Շապուհէն Հայաստանի սպառնացող ահաւոր վտանգը, միացուց հայ նախարարները և ապահովեց Բիւզանդիոնի օգնութիւնը ընդդէմ այդ խորամանկ ու հզօր թշնամուին և ատով յաջողեցաւ մեր հայրենիքին մէջ փճացումէ ազատել մէկ կողմէն քրիստոնէական կրօնը, — զոր Շապուհ գրեթէ բոլորովին ջնջած էր Պարսկաստանի մէջ, — իսկ միւս կողմէ Արշակունեաց հարստութիւնը, որուն գոյութիւնը անհրաժեշտ էր զրոյց գիւտին, Աստուածաշունչի թարգմանութեան և հայ դպրութեան ծագման ու ծաղկումին համար:

Երկրորդ՝ Ներսէս մեծ է նաեւ իր ներմուծած

եկեղեցական բարեկարգութիւնովը և հիմնած բազմաթիւ կրթական ու բարեգործական հաստատութիւններովը: Ասոնց միջոցաւ նա արժաւնապէս կոչուեցաւ «լուսաւորիչ սրտից», քանզի անոնցմով քրիստոնէութիւնը հայուն սրտի կրօնը դարձաւ և աւելի արմատացաւ անոր մէջ: Ուստի հայ ժողովուրդը անխախտ մնաց իր հաւատքին մէջ՝ հակառակ Շապուհի և Մերութանի ու Վահանի կողմէն եկած հալածանքին: Ասիկա սիրայօժար տոկաց չարչարանքներու ու մարտիրոսացման, քանզի նա աւելի եւս ըմբռնած էր լուսոյ կրօնին արժէքը:

Երրորդ՝ Ներսէս մեծ դեր կատարած է նաեւ հայ լեզուի մշակման մէջ: Իր աշակերտները քարոզելու և Ս. Գրոց մասերը բերանացի հայերէնի թարգմանելու վարժեցնելով՝ ան կ'ստիպէր զանոնք հետզհետէ զտելու և ճոխացնելու հայերէնը: Իր աշակերտներէն են Սահակը և Մեսրոպը, Ոսկեդարու ռահվիրաները:

Արդարեւ մեծ գործ: Եւ Ներսէս յաջողեցաւ կատարել այդ ամէնը համեմատաբար կարճ ժամանակի մը մէջ, ան ալ քաղաքական փոթորկալից շրջանի մէջ: Գաղտնիքը: Ուժը իր մէջը չէր: Ներսէս ալ «մեզի նման կիրքերու ենթակայ մարդ մըն էր» ինքնիրմէ բան մըն ալ կարող չէր ըլլելու: Ան գիտէր այդ ամէնը, ուստի նա աղօթքով կապուած էր իր երկնաւոր Հօր՝ Անոր հետ իր ունեցած մտերիմ հաղորդակցութիւնն էր որ իրեն տուաւ անվախութիւն՝ յանդիմանելու թագաւորը, խոնարհութիւն՝ լուսալու ամենէն թշուառին վէրքերը ու սեղանակցելու անոր, սրատեսութիւն՝ ճանչնալու իր հայրենիքին սպառնացող վտանգները և կորով՝ անընկճելի կամքով հետապնդելու երկրին յառաջդիմութեան միջոցները: Ուստի փառքն ու պատիւը կը պատկանի իր Տէրոջ, Յիսուսի և ոչ թէ Ներսէսի՝ որ միայն գործիքն էր:


Բրօք. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

Ո՛չ մի խօսք՝ միայն մէկ բառ չարամիտ
նախատական,

Բայց ահա թունաւոր խայթոց մը կը մխուի:

Ո՛չ մի խօսք՝ միայն մէկ բառ բարութեան,
եւ ահա ան՝ վշտացելով սիրտ մը կ'ամոքէ:

Ո՛չ մի խօսք՝ միայն մէկ բառ համակրանքի,
եւ ահա տառապեալ հոգի մը կը մխիթարուի:



ՄՐՏԷ Ի ՍԻՐՏ

Սիրելի Ա.

Անցեալ տարի արձակուրդին գրած նամակներուդ, այսօր կ'ուզեմ պատասխանել: Ուշացուցի, այո՛, բայց մոռցած չեմ. — Քեզ միշտ կը յիշեմ:

Շնորհակալ եմ Տէրոջմէն, որ շատ մը ուրիշ աշակերտներու հետ, քեզ ալ գէթ ժամանակի մը համար, իմ հոգեւոր և բարոյական խնամքիս յանձնեց: Անշուշտ խօսքով, վարժունքով և ազդեցութեամբ քու մէջդ ցանուած բարի սերմը անպտուղ պիտի չըլլայ: Տէրը հաւատարիմ է Իր բոլոր խոստումներուն մէջ: Վստահ եմ որ Շապ. 55: 40—41ը զմայլելի կերպով պիտի գործադրէ քու և միւս աշակերտներուս կեանքին մէջ: Փա՛ռք Անոր:

Հայրդ կը գրէ թէ՛ — կեանքդ մեծ փոփոխութիւն կրած է այս տարի: Դպրոցական պարտականութիւններուդ մէջ աշխատասէր ես և յաջողակ: Կարգիդ առաջիններէն եղած ես: Յետոյ, Սուրբ Դիրքդ կարգալու և ազօթելու մէջ ալ հաւատարիմ ես: Տէրոջը հաճելի և ծնողքիդ հնազանդ ըլլալու ալ հոգ կը տանիս: Հիանալի՛, եթէ միշտ շարունակես: Այնպէս մը յարատեւէ, որ քեզի համար ալ ըսուի թէ՛ — զօրութեան զօրութիւն կ'երթայ. Սաղ. 84: 7: Այս վկայութիւնները այնքան ուրախացուցին զիս, որ սիրելի Առաքեալին պէս ըսելս եկաւ, «Ասկէ մեծ ուրախութիւն մը չունիմ, որ կը լսեմ թէ իմ որդիներս ճշմարտութեան մէջ կը քալեն». Գ. Յով. 4: Տէրը քեզ օրհնէ:

Անցնինք կարեւոր խնդրի մը: Քեզ լաւ ճանչցայ սիրելիս: Մեր Արարիչ Հայրը քու մէջդ շատ լաւ յատկութիւններ գրած է: Ինչպէս՝ առատաձեռնութիւն, ներողամտութիւն, ծառայութեան հոգին, փափկասրտութիւն և այս բոլորը աչքառու ցցունութեամբ: Տխուր կէտ մըն ալ կայ սակայն, զոր պարտաւոր եմ յիշեցնել քեզի, այն ալ թուականութիւնդ է: Եւ այս՝ գորշ շուք մը կը ձգէ քու այնքան գեղեցիկ հոգիիդ ու նկարագիրդ կազմող յատկութիւններուն վրայ:

Քու ծնողքդ, կամքիդ թուութեանը պատճառաւ շատ յոռետես էին ապագայիդ շուրջ: Ես ալ խոստովանիմ թէ քու վրադ տածած յոյսերուս միշտ զաղտնի վախ մը հետեւած է: Ափսո՛ս, ըսած եմ յաճախ ինքնիրենս, ի՞նչ պիտի ըլլայ այս աղուոր աղուն յետագայ և յաւիտենական վիճակը, եթէ օր մը Աստուած մի արասցէ, որբ իյնայ իր ծնողքին օրհնեալ հսկողութենէն և եկեղեցւոյ ալդ սուրբ մթնոլորտէն: Ահա ծանր հարցում մը, որուն այնքան ալ դիւրին չէր պատասխանելը: Եւ ինչպէ՞ս պատասխանէի, քանի որ դուն, այնքան շուտ կը բարեկամանայիր Հար ընկերոջ մը, որքան բարիի մը: Այնքան շուտ «այո՛» կ'ըսէիր մոլորեցուցիչի մը կողմէն քեզի ներկայացուած չարութեան առաջարկի մը, որքան բարի խրատի մը: Այնքան շուտ անձնատուր կ'ըլլայիր Հար արբարքի մը, որքան բարի գործի մը: Այսպէս է, չէ՞:

Օր մը սակայն, երբ քու և ընկերներուդ շուրջ կը մտածէի Տէրոջը առջեւ, և կը պատրաստուէի ազօթելու ձեզի համար, Սուրբ Հոգին հետեւեալ համարը յիշեցուց ինծի, «Առանց ինծի բան մը չէք կրնար ընել», Յով. 15: 5: Տէր Յիսուս այս խօսքը ուղղեց թէ՛ յեղյեղուկ Պետրոսին, թէ՛ յամառ ըլլալու աստիճան կամքի մէջ զօրաւոր թոժմասին, նաև «Որդիք որոտման» Յովհաննէսի և Յակոբոսի: Այն ատեն հասկցայ թէ առանց Յիսուսի՝ ոչ զօրաւոր կամք ունեցողը, ոչ ալ տկար կամք ունեցողը հոգեւորապէս բան մը ընելու կարող են: Առանց Յիսուսի Պետրոս կ'ուրանայ և թոժմաս կ'անհաւատի: Բայց Տէր Յիսուսով ուրացողը՝ անդիմադրելի վկայ և թերահաւատը Հնդկաստանի պատուական աւետարանիչ կը դառնայ: Առանց Անոր ես ալ բան մը չեմ կրնար ընել և բան մըն ալ չեմ արժեք: Բայց Անոր միջոցով «Քիւրտերու Միսիոնար» կարգուեցայ: Փա՛ռք Յիսուսի: Քեզի գալով՝ պարագան նոյնն է: Տկար կամք ունենալ՝ տխուր բան մըն է, բայց ոչ յուսահատական: Ընդհակառակը, այդ պատճառ մըն է որ դուն առաւել ինքզինքդ արհամարհես և Տէր Յիսուսի փարիս, քու կամքէդ հրաժարիս և Անոր ամենակարող զօրութեանը կ'առչիս, այն ատեն պիտի կատարուին: Բ. Կոր. 12, 9 և Ես. 40, 29—31: Յիսուսի՛, միշտ Յիսուսի, միայն Յիսուսի նայէ և կռթնէ, և ամէն ինչ լաւ պիտի երթայ, ըսել կ'ուզեմ Տէրոջը ուղածին պէս պիտի ըլլայ:

Անոր կարօտովը լի, ուսուցիչդ

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՉԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԱՄՈՒԷԼ ԵՂԲ. ՊԱԳԳԱԼԵԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ



(Շարունակութիւն անցեալ թիւէն)

Աղէքսանդրիա. — Տասնեակ մը զրահաւորներ և թորփիյներ խարսխած են հոն: Ցամաքը, լաւախաղացի ճարպիկութեամբ զրամահաւաքներու յօրինած խաղերը իսկապէս հետաքրքրաշարժ են: Մինարէները, մահիկակիր զրօշակներն ու ֆէսերը զգալ կուտան թէ իսլամական սահմաններու մէջ ենք արդէն:

Եափա կը հասնինք 29 Սեպտ. արեւածագին: Նաւը բաւական հեռուն կը խորսխէ, ու մենք Սուրբ երկիրը կը դիտենք միգային թեթեւ շղարշի մը տակէն: Քոյր Աննամարի կաթոլիկ քոյրերուն հետ հոս կ'իջնէ Երուսաղէմ երթալու: Կէսօրուայ մօտ նաւը կը շարժի, երեկոյեան Հայֆա հասնելու համար: Հոն կը ժամանենք երբ դեռ երկու-երեք հասակ կայ արեւամարի: Գեղածիժաղ ծովախորշ մը և ապագայ խոստացող նաւահանգիստ մըն է այս՝ նախորդին պէս: Մօզ թէրները, հետս բարեկամացած գաղափարապաշտ Իսրայէլացի երիտասարդը, հոս պիտի իջնէ: Բայց նախ քան այդ՝ կուգայ յուզումով և հպարտութեամբ թրթռուն, ցուցնելու ինծի ծոցէն սարալանջ մաքլցող ամենամարդիական շէնքերը քաղաքին, և ըսելու՝ — Տեսէք, շատ քիչ ժամանակի մէջ բարձրացող այս կառուցումները, կը նշանակեն հսկայական զոհողութիւնն ու հերոսական ջանքերը Հրեայ ժողովուրդին: Ես ալ կ'երթամ Իսրայէլի փրկութեան համար աշխատելու. — Մի քանի քաջալերական խօսքերէ և փոխադարձ մաղթանքներէ վերջ, կը համբուրուինք: Ապա, մինչ կը փութայ մեկնելու, կ'աւելցնէ, — «Ցրտեսութիւն, երկնից մէջ գուցէ զիրար գտնենք»: Ան կ'երթայ ու ես կը շարունակեմ մտածել Ես. 62. 6-7 ին և Սաղ. 122. 6 ին վրայ. — Երուսաղէմի խաղաղութիւնը խնդրեցէք թող յաջողին անոնք որ քեզ կը սիրեն:

Դ.

Պէյրուս

30 Սեպտ. լուսաղէմին Պէյրուս կը ժամանենք: Ամբոխին հետ անցազրի խնդրով զբաղելու վրայ եմ: Երբ մէկը ուսս կը դափէ, կը դառ-

նամ: Թոնիրէն նոր քաշուած հացի պէս եփուն երկու արեւշատ դէմքեր: Մին սիրելի ներսէսն է: Գիրկընդխառնումնիս յուզումի և ուրախութեան անհուն յորդում մը կ'ըլլայ: Միւսը կը գուշակեմ: Մուհամէտէն հրաժարած և Քրիստոսի յանձնուած ժանտարման, սիրելի Ճէլալ եղբայրն է: Շատեր, ըսի ինքնիրենս, «Մուհամէտականաց ապաշխարութեանը հնարաւոր ըլլալուն չեն հաւատար, ոչ ալ զանոնք աւետարանելը ստիպողական պարտականութիւն մը ըլլալուն: Սակայն Ճէլալ եղբայրը՝ կրնանք ներկայացուցիչը և Յայտ. 7. 9ը գրաւականը նկատել այն շատ ապաշխարած ու ապաշխարելիք իսլամ հոգիներուն, որոնք «Գառնուկին առջեւ պիտի կենան, ճերմակ հանդերձներ հագած և ձեռքերնին արմաւենիներ բռնած»:



Դոյքերուս կարգադրութենէն վերջ քաղաք կը մտնենք: Դղեակէ մը խրճիթ մտնելուն նմանցուցի Պէյրուս մուտքս: Սակայն խրճիթին նախնական կեանքն ու կրակշատ օճախին գոլը, յաճախ աւելի զրաւիչ չէ՞ն քան ապարանքին պերճանքը: Շինարարական մեծ փոփոխութիւններ կրած է քաղաքը 1925էն ի վեր, զոր ձգեցի: Մեր ճամբուն վրայ կ'իյնայ սիրելի Սամուէլ եղբայր Փաշկեանի գործատեղին: Կը մտնենք: Զայն կը գտնենք հապճեպով սափրուելու վրայ, նաւ հասնելու համար: Կ'ուրախանայ: Բայց կը ցաւի որ զայն կանխած ենք: Մէկ երկու կարճ խօսք: Ապա միասին աղօթքի կը կայնինք: Մեկնելու պահուս, ապակեզարդի վրայ գեղարուեստօրէն աշխատուած համար մը կը նուիրէ ինծի: Գործատիրոջմէն խոստում մըն է ան, զոր այսօր զրասեղանիս դիմաց, պատէն կախած եմ, շարունակ անով զօրանալու համար: «Ինծի ապաւինողները պիտի չամչնան». Ես. 49 : 23: Ինչպէ՞ս կ'ուրախանամ մտածելով թէ՛ դեռ ցամաք չկոխած, ապաշխարած իսլամ մը ողջագուրելու պատեհութիւնը և այս հոգեպնդիչ խոստումը տուողը, նոյն նախախնամական Ձեռքն է, որ ուսերուս դափելով կ'ըսէ. —

Հորիզոնդ գորշ ըլլայ կամ լուսաւոր,
Ծովն ալեկոծ, կամ հանդարտ
Ասպարէզդ վերելք մ'ըլլայ փառաւոր
Եւ կամ վայրէջք մը անհարթ:

Մի՛ վարանիր, զաւա՞կ ես դուն, Ես Հայր եմ,
Որ քու ճամբադ կը գրծեմ...
Խաղաղութեամբ յառաջացիր, զի ահա՝
Քեզի հետ եմ մինչեւ մահ:

ՏԵՐՈՋՆ ՀԵՏ

Գերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.



1
Քեզ համար ապրիմ
Քեզ համար մեռնիմ
Ապրիմ կամ մեռնիմ, Յիսուս ես Բռնիկ եմ
ԿՐԿ. Ահ, երջանիկ եմ միայն Քեզմով
Յիսուս, լոյ Քեզմով:

2
Տէր, Դուն իմ կեանքս ես
Տէր, Դուն իմ յոյսս ես
Դուն միայն Տէր իմ, լըսես իմ աղերս
ԿՐԿ. Ահ, երջանիկ եմ...

3
Տէր, խօլ պայքարիս
Մէջ զօրացնես զիս
Ու կեանքդ յաղթական իմ մէջ հաստատես
ԿՐԿ. Ահ, երջանիկ եմ...

4
Քեզի նայելով
Քեզի յուսալով
Տունս հասնիմ պիտ ես հաստատ հաւատքով
ԿՐԿ. Ահ, երջանիկ եմ...

Կէսօրուայ համար հիւրասիրուած ենք Տօքթ. Ս. Պէտրեանց: Յետ ճաշի ժամանակ կ'ունենամ տեսակցելու տան ալեգարդ հանիին ու արդէն ուսուցչութեան կանչուած իր համալսարանական թոռներուն հետ: Օրհնեալ մեծ մայր, որ յիշեցուցի ինծի Առակ. 16 : 31ին հետ 128րդ Սաղմոսին «Երանելիները», Կէսօրէ վերջ ինքնաշարժով Պուրմանա կը բարձրանանք միշտ եղբորս

Ներսէսին հետ: Հոն իր կիներ դեռ նոր մայր եղած է Շնորհիկ անունով գեղանի աղջնակի մը: Գեղեցիկ է Լիբանան, շա՛տ գեղեցիկ: Ահա թէ ինչո՞ւ Սուրբ Գրոց հեղինակներուն հետ բիւրաւոր ալ զրոյներ ալ անոր դիւթանքը երգած են շարունակ: Հոն, Դուէյքըրներու զպրոցին մէջ մաթէմաթիք դասաւանդող Պր. Ալ. Դունտազ-ճեան (Ներսէս եղբոր աներձագը) և իր ազնիւ

կինը մեզ լայնարտօքէն կ'ընդունին: Երեք օր լիաթոքն Լիբանանը շնչելէ վերջ Հալէպ կ'իջնենք օթօռայով: Մեր ճամբուն երկայնքին փրճուած են տարածուն դաշտադէտիններ, մեծ մասամբ ողբալիօրէն աչքաթող ու խոպան: Շատոնց տեսած չէի, ու հիմա մաքնիսացող զմայլանք կ'առթեն ինծի սեւ վրանախսեմքերը, և անոնց մօտիկ արածուող դեղտի կամ այծի երամակները վաչկատուն ցեղերուն: Արեւելքի մէջ եմ:

Ե.

Հալէպի մէջ

Ուշ իրեկուն է: Զիակառք մը մեզ կը տանի Հալէպի սակաւալոյս փողոցներէն: Կը ցուցուն ինծի մեր դիմաց ուրուագծուող կիսաքանդ գաղթականները: Քիչ մըն ալ, և ահա ասոնց միջեւ մօր մը պէս կանգնող A. C. O. ի Միս. կայանը, իր պարսպապատ գոյգ տներով: Ահա և քոյրերը, որոնք Տէրոջմով մեր ազգին ծառայելու համար ձգած են հայրենիքի հետ նախ տուն ու ամէն նուիրականութիւն: Սիրտս ծով կը դառնայ երախտագիտութեան: Յիրաւի մեր Աստուծոյն անունը ԵՀՈՎԱ ՀԻՐԷ է: «Ան որ իր Որդւոյն չը խնայեց... ա՛լ ինչպէս անոր հետ ամէն բաները չպարզուեալ»: Սենեակը կը տարաւիմ: Սեղանին վրայ խօսուն նկար մը դրուած է: Ետեւը քարեգալուստի սրտագին մաղթանքներու հետ, հետեւեալ համարները կը կարդամ, Սաղ. 121: 1-2 և Երեմ. 17: 7-8: Կը ծնրադրեմ անմիջապէս ու կ'ըսեմ: «Ո՛վ Տէր, սիրելի գործակիցներու կողմէ ինծի ներկայացուած համարները, որպէս թէ Քեզմէ կ'ընդունիմ: Անոնք միանգամայն մարգարէութիւն, մաղթանք ու խոստում են: Թէ և անարժան՝ բայց ի փառս Քու մեծ անունիդ և ի նպաստ Ճէզիրէի գործիդ թող կատարուին կէտ առ կէտ»:

Ամիս մը քնացի Հալէպ: Այցելութիւններով և ժողովներով զբաղեալ ժամանակ մը ունեցայ:

Մեծապէս խորախացայ Սուրիահայ Աւետ. Եկեղ. Միութեան ժողովներուն ներկայ գտնուելուն համար: Այս լաւագոյն առիթը եղաւ աւելի մօտէն ճառչնալու տեղւոյս հոգ. պաշտօնականները և ծանօթանալու Տէրոջը գործին ծաւալին, վիճակին ու մէթոտներուն: Խանդավառիչ էր մանաւանդ ահաւատիս և ահաւատիս ըլլալ «Ջանից ընկերակցութեան» վարիչներուն: Անոնց վկայութիւնը, ժողովական կնիքը կը կրէր թէ՛ ճշմարտապէս Հոսեթի (Լիբանան) մէջ Տէրը անոնց հաւելեալ է, իրենց մէջ գործած է և իրենցմով կ'ուզէ գործել: Մեր մաղթանքներուն միջոցով եւս նախ մեր աղօթքները, որպէս զի

այս յուսալից շարժումը ծնունդ տայ խորունկ ծաւալուն արթնութեան մը: Այս ժողովներուն ընթացքին պատահութիւն արուեցաւ ինծի որ Զորանալի մեր հայ Աւետ. եկեղեցիներուն շուրջ ամփոփ տեղեկութիւն մը տամ, զոր ըրի հաճոյքով: Տեղւոյս Ամերիկ. գոլէճին մէջ ալ պատգամ տալու կանչուեցայ: Նիւթ առի «Ճանչնալ Քրիստոսը» Փիլ. 3: 40: Անյաջող թէ և բայց միախառնական անդրանիկ ժողովս նկատելով այդ (որովհետեւ աշակերտութիւնը Հայ, Ասորի, Հրեայ և Իսլամ տարրերու համախմբում մըն էր) փառք տուի Տէրոջը:

Ներսէս եղբայրը.— Տեսնելու էք զայն Ճիւմա պազարին մէջ: Ամէն Ուրբաթ, արեւածագին հոն է ան: Ուղղաձգօրէն աշտարակուած միշտ նոյն տեղը: Իր սուրբ պաշտօնովը նուիրականացուցած է այդ ճամբեղբը: Հոն է որ ամենէն շատ կը խնդունին ու գիրար հրաշտկելով կ'երթեւեկեն Առհամկտի հետեւորդները: Հետեւէն զիտողին, սեւ ու ծփուն լիւծ մըն է հրապարակը: Մօտէն, արեւելեան հազար պէսպիսութիւններով, հազար գոյնով, հազար տարագով, լուսանքի կամ ելլա՛հ, վալլահ-պիլլահի հազար ձայններով խոսի՛մադանձ Բաբելոն մը: Ամէն ինչ նոր կը թուի ինծի: Ոչինչ սակայն կը հետաքրքրէ զիս այնքան, որքան այն կէտը, ուր իր զիգած Սուրբ Դիքերուն դիմաց կեցած է «Ճիւմապազարի Աւետարանիչ Սուրբգրամալար»: Մեղք որ նկարել չեմ գիտեր: Կարմիր Ֆէսը գլխուն, ժպիտը շրթներուն, մի քանի կենսաբաշխ հատորներ ձեռքին մէջ կ'սպասէ հանդարտ: Մեղք միամիտակ և մտածկոտ, մերթ կը շրջապատուի քանի մը ծաղրածու ստահակներով: Երբեմն Գոնթանի նենդ և ազմկայարոյց աշակերտները կուգան զայն խայթելու կամ քրտնցնելու: Երբեմն ալ գրեթէ քարեկամացած, երիտասարդ ազնիւ ուսանողներ կ'այցելեն զայն, հոն խօսակցելու համար: Կը պատահի որ գնեն ալ, ո՛վ գիտէ սոսկ հետաքրքրութեան թէ օգտուելու նպատակաւ: Ի՞նչ որ ալ ըլլալ, ամէն անգամ զայն Սուրբ Հոսեթով լեցուն պայուսակը շալակը տեսնելու՝ կ'ըսէի.— «Ահա՛ սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ: Ու երբ կը ցանէր, մէկ քանիները ճամբուն քով ինկան... ուրիշները ապտաթուտ տեղերու վրայ ինկան... ուրիշներ ինկան փռչեբու մէջ... և ուրիշներ ինկան աղէկ հողի մէջ...» (Ճարունակելի)

ՍԱՄՈՒԷԼ Գ.

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille